



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ (ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ)
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2008-2011 թթ.

ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ3

ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ 7 ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՔԱՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....4

- ՆՊԱՏԱԿ 1. Խոշոր բիզնեսի ճիշտ, Լիարժեք եվ ժամանակին հարկման աղանակներ4
- ՆՊԱՏԱԿ 2. Փոքր բիզնեսի համար առանձին ազդեցություններ հարկման բեռի սաշտառում՝ “Փափուկ” հարկման վարչարարություններին Կիրառելու մասին8
- ՆՊԱՏԱԿ 3. Հարկման մարտնչության կոնոնիցիաների հարթաչափում13
- ՆՊԱՏԱԿ 4. Հարկման Պարսպարարությունների Կատարման Վճարման (Ինքնազուստման) Մեթոդներին Աստիճանական Ներդրում21
- ՆՊԱՏԱԿ 5. Հարկման ստորագրությունների նոր քաղաքականություններ26
- ՆՊԱՏԱԿ 6. Հարկման մարտնչության կատարման առանձին ազդեցությունները հարկման32
- ՆՊԱՏԱԿ 7. Հարկման վարչարարություններին սեղանակալի հարկման առանձին ազդեցությունները38

ՄԱՍ Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ՑԱՆԿ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 42

ՄԱՍ Գ. ԱՍՓՈՓՈՒՄ54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009-2012թթ. ԾՐԱԳԻՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ57

ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....58

- I. ՄԿԶԲՈՒՆՔ. Տնտեսվարող սուբյեկտների կողմից ներսնույն առևտրի շահույթի վերաբերյալ հարկման զրկումները58
- II. ՄԿԶԲՈՒՆՔ. Մաքսային ծախսերի առանձին ազդեցությունները կատարման համարման վճարման60
- III. ՄԿԶԲՈՒՆՔ. Ռեպլիկայի կատարման վրա հիմնված մաքսային հարկման համարման վճարման61
- IV. ՄԿԶԲՈՒՆՔ. Ինքնազուստման համարման ընդունումը եվ մաքսային սեղանակալի հարկման զրկումները62
- V. ՄԿԶԲՈՒՆՔ. Մաքսային ընթացակարգերի Պարզեցում63
- VI. ՄԿԶԲՈՒՆՔ. Այլ մարտնչությունների ներառումը առանձին ազդեցությունները64
- VII. ՄԿԶԲՈՒՆՔ. Մաքսային մարտնչությունների սեղանակալի վերաբերյալ65

ԱՍՓՈՓՈՒՄ66

Հավելված N1

ՀՀ կառավարության 2008 թվականի
օգոստոսի 7-ի N 941-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008-2011
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետական եկամուտների գերակշիռ մասը կազմում են և առաջիկա տարիներին կկազմեն հարկային եկամուտները: Զարգացման ներկա փուլում կառավարությունը կարևորում է ինչպես այդ եկամուտների մակարդակը, այնպես էլ դրանց ապահովմանն ուղղված վարչարարության ժամանակակից, անաչառ և հետևողական միջոցառումների իրականացումը: ՀՀ հարկային պետական ծառայությունը հանրային այն կառույցներից է, որն ամեն օր շփվում է երկրի քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների հետ, իսկ հարկային ծառայողների վարքագիծը և կիրառած վարչարարությունն ընկալվում է որպես կառավարության քաղաքականություն:

Հարկային ծառայությունը պետք է նվազագույն խնդիրներ ստեղծի գործարար համայնքի համար՝ սահմանելով հաշվետվությունների և գրանցումների վարման պարզ և սպառիչ պահանջներ, իրականացնելով սահմանափակ և արդյունավետ ստուգումներ, պայքարելով անազնիվ աշխատողների դեմ և ապահովելով հարկային ծառայության գործունեության անհրաժեշտ թափանցիկություն: Հարկային ծառայության այդպիսի աշխատանքը պետք է փոխհատուցի այն դժվարությունները, որոնք հայաստանյան գործարարն ունի տարածաշրջանում՝ կապված ծախսերի հարաբերականորեն ավելի թանկ լինելու ու այլ խոչնդոտների հետ: Այդպիսի խնդիրներ լուծելու համար կպահանջվի ունենալ հարկային վարչարարության հստակ առաքելությամբ ռազմավարություն, սահմանված նպատակներ ու դրանցից բխող միջոցառումների ծրագիր:

ՀՀ ՆԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՆԵՂԻՔԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ հարկային ծառայության հիմնական անելիքը, առաքելությունը կայուն պետական եկամուտների ապահովումն է՝ «դեմքով դեպի հարկ վճարողը» սկզբունքի գերակայությամբ:

Հարկային վարչարարության ռազմավարությունը առաջիկա տարիներին հիմնված է լինելու ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության ծրագրի, հարկաբյուջետային ոլորտը կարգավորող օրենքների, միջազգային և ՀՀ վերջին տարիների առաջավոր փորձի՝ հարկերին վերաբերվող դրույթների վրա: Երկարաժամկետ հատվածում նախատեսվում է ունենալ ժամանակակից պահանջները բավարարող հարկային վարչարարություն՝ աստիճանաբար բացառելով կարճաժամկետ հատվածներում նախորդ տարիների արատավոր դրսևորումները և հասնելով նրան, որ ապահովվի հարկային օրենսդրության պահանջների համահավասար և ճշգրիտ կիրառումը: Որպես տնտեսական համակարգի գործունեությունն ապահովող անհրաժեշտ տարր՝ հարկային համակարգի բարեփոխումները կիրականացվեն նվազագույն կորուստների և առավելագույն արդյունքների ապահովման սկզբունքով: Սույն փաստաթուղթը սահմանում է հարկային վարչարարության բարեփոխումների հիմնական ուղղությունները: Հարկային ծառայությունն իր առաքելության իրացման համար իրականացնելու է կոնկրետ ծրագրեր, միջոցառումներ, ապահովելու է դրանց վերահսկողությունը, ակնկալվող արդյունքների գնահատումը և հասարակության իրազեկումը:

Իր առաքելության կենսագործման համար հարկային ծառայությունը սահմանել է ստորև ներկայացվող կոնկրետ 7 նպատակներ:

ՀՀ կառավարությունը հետամուտ է լինելու հարկային վարչարարության ռազմավարության հետևողական կիրառմանը, այդ նպատակով կստեղծվի ՀՀ վարչապետի ղեկավարությամբ գործող՝ եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհուրդ (ԵՎԲԱԽ), որը կքննարկի ՀՀ հարկային համակարգի բարեփոխումների, վարչարարության զարգացման ուղղությունների, ինչպես նաև դրանց ընթացքի ու արդյունքների եռամսյակային հաշվետվությունները: Հարկային համակարգի նպատակային, իրատեսական և վերահսկելի բարեփոխումները այն կդարձնեն վստահելի, պարզ և մրցունակ, կբարելավեն գործարար միջավայրը, կխթանեն տնտեսական աճը և որպես հետևանք կապահովեն հարկային եկամուտների աճ:

ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ 7 ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՔԱՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿ 1.ԽՈՇՈՐ ԲԵԶՆԵՍԻ ՃԻՇՏ, ԼԻԱՐԺԵՔ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Խոշոր գործարարների կողմից հարկային պարտավորությունների կատարումը էականորեն կնպաստի ամբողջ հարկային համակարգի կայացմանը: Գործարարի կամ կազմակերպության իրական սեփականատիրոջ կարգավիճակից ու զբաղեցրած դիրքից անկախ՝ հարկային ծառայությունն իր աշխատանքներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի խոշոր գործարարների համախմբված կապիտալի ու եկամուտների շարժի վերլուծությանը, նրանց հարկային պարտավորությունների ճշգրտմանն ուղղված հսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Ներդրվելու է մեխանիզմ, որը բացահայտելու է և թույլ չի տալու, որ կառավարության անդամները, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներն ու պաշտոնատար բարձր դիրք զբաղեցնող այլ անձինք զբաղվեն գործարարությամբ, այդ թվում՝ միջնորդավորված ձևով: Խոշոր բիզնեսում ռիսկայնության բարձր աստիճան հայտնաբերելու պարագայում օրենքը կպարտադրի միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի անցկացում: Պարբերաբար հանրությանը կիրազեկվի հարկային խոշոր իրավախախտումների ու դրանց նկատմամբ կիրառված գործողությունների մասին:

Արդյունքում ունենալու ենք խոշոր բիզնեսի լիարժեք և ամբողջական, իրական ծավալներով հարկում, կբացառվի խոշոր բիզնեսի ներկայացուցիչների միջև տարբերակված մոտեցումը և վերջիններիս շրջանակում կարմատավորվի հարկման համահավասարության սկզբունքը:

Սույն նպատակին հասնելու օբյեկտիվ վերահսկվող կատարողականության ցուցանիշներն են (այսուհետ՝ կատարողականության ցուցանիշ).

- բարձր գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականության 75 տոկոսից ավելին ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է որպես կատարված,
- բավարար գնահատական – եթե սույն նպատակից բխող քաղաքականության 50 -74 տոկոսն ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է որպես կատարված,
- անբավարար գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականությունն ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է մինչև 49 տոկոս միջակայքում:

Այս նպատակով իրականացվելու է հետևյալ քաղաքականությունը՝

- 1.1. պետական եկամուտների մեջ հիմնական դերակատարում ունեցող հարկ վճարողների հարկման բազաների նկատմամբ հասցեական մոտեցումներ
- 1.2. պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելը կանխարգելող օրենսդրական և վարչարարական մեխանիզմի ներդրում
- 1.3. նոր քաղաքականության մշակում՝ հարկ չվճարող կազմակերպությունների անունների բացահայտման գծով:

Քաղաքականություն 1.1. Պետական եկամուտների մեջ հիմնական դերակատարում ունեցող հարկ վճարողների հարկման բազաների նկատմամբ հասցեական մոտեցումներ

Պետական բյուջեի կատարման մեջ որոշիչ դերակատարում ունեցող հարկ վճարողների նկատմամբ կիրականացվի հասցեական վարչարարություն՝ նախատեսելով հարկման բազաների իրական ծավալների լիարժեք հայտարարագրում, վճարման ենթակա հարկերի իրական չափերի բացահայտում և պետական բյուջե դրանք լիարժեք ծավալով ժամանակին վճարում:

Ներկայումս պետական եկամուտների մեջ հիմնական դերակատարում ունեցող հարկ վճարողները տեղաբաշխված են խոշոր հարկ վճարողների և 3 մասնագիտացված ոլորտային հարկային տեսչություններում: Նախատեսվում է այդ տեսչությունների հիման վրա ստեղծել նոր՝ համախմբված հարկային տեսչություն, որի միջոցով ձեռք է բերվելու կենտրոնացման էֆեկտ:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքում ստացվելիքը (այսուհետ՝ արդյունք), կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>1.1.1 Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2008թ. նկատմամբ աճել է 2.3 տոկոսային կետով</p> <p>1.1.2 Հարկային եկամուտներում հիմնական դերակատարում ունեցող հարկ վճարողների հետ տարվող աշխատանքներն իրականացվում են ավելի արդյունավետ</p>	<p>Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշ* (2008թ. համեմատությամբ).</p> <p>2009թ-ին 17.64%՝ 0.7 տոկոսային կետով աճ, 2010թ-ին 18.54%՝ 0.9 տոկոսային կետով աճ, 2011թ-ին 19.24%՝ 0.7 տոկոսային կետով աճ:</p> <p>Խոշոր հարկ վճարողների նոր՝ համախմբված հարկային տեսչությունը հիմնված է:</p> <p>Մինչև 2009 թվականի վերջը հարկային եկամուտների մեջ խոշոր և ՓՄՁ տեսակարար կշիռները փոփոխվել են՝ հոգուտ խոշորների՝ 10 տոկոսային կետով համեմատած 2007 թվականի հետ, մինչև 2011 թվականը 20 տոկոսային կետով համեմատած 2009 թվականի հետ:</p> <p>Շինարարության, շինանյութերի, սննդամթերքի ներմուծման և արտադրության ոլորտների հարկային վճարումների տեսակարար կշիռն ընդհանուր հարկային վճարումներում ունեցել է զգալի աճ:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշում, ՀԾ գերատեսչական ակտեր, ՀՀ ԱՎԾ տեղեկագրեր</i></p> <p>* հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի աճի հաշվարկման համար հիմք է ընդունվել ՀՀ 2009-2011թթ. ՄԺԾՍ նախատեսված համապատասխան ցուցանիշը:</p>

Ենթադրություններ. ապահովված է պետական այլ մարմինների շահագրգռվածությունը և օժանդակությունը հարկային ծառայության վարչարարական ծրագրի իրագործմանը:

Ռիսկեր.

1. ՀՆԱ-ի աճի տեմպերը չեն համապատասխանում ծրագրավորված աճին, խախտվել է ՀՆԱ-ի ՀՀ միջնաժամկետ ծախսային և աղքատության հաղթահարման ծրագրերի շրջանակներում կանխատեսված կառուցվածքը: Դա կարող է հանգեցնել հարկային արտոնություն ունեցող ոլորտների տեսակար կշիռների փոփոխության:

2. Թեև տնտեսության համար դրական է խոշոր հարկ վճարողների տեսակարար կշռի նվազեցումը տնտեսությունում, դա հանգեցնում է խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի տեսակարար կշռի նվազեցմանը:

Քաղաքականություն 1.2. Պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելը կանխարգելող օրենսդրական և վարչարարական մեխանիզմի ներդրում

Ներկայումս հասարակական դիտարկումները մատնանշում են, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաև պետական մարմինների այլ աշխատակիցների մի ստվար զանգված իրենց հիմնական պարտականությունների հետ մեկտեղ իրականացնում են բիզնես գործառույթներ: Դա օրենքի խախտում է և առաջացնում է անհավասար մրցակցության:

Նախատեսվում են իրավիճակը փոփոխող քաղաքականություն և մի շարք համապատասխան միջոցառումներ: Միաժամանակ, նախատեսվում է նաև իրականացնել սուբյեկտիվիզմը նեղացնող քաղաքականություն, այն է՝ օրենքների պարզեցում, ստուգման ընթացակարգերի հստակեցում, որոնց մասին նշվում է սույն փաստաթղթի համապատասխան նպատակներում և քաղաքականություններում:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>1.2.1 Հայաստանում կիրառվում է հորիզոնական արդարության սկզբունքը (այն է՝ բոլոր հարկ վճարողների նկատմամբ հարկման առումով միատեսակ մոտեցման ցուցաբերում և հավասար հարկման դաշտի ապահովում) հարկային եկամուտների ձևավորման ընթացքում, որպես արդյունք այն բանի, որ օրենսդրության խստացումը հանգեցրել է նմանատիպ պաշտոնական չարաշահումների և հովանավորչության հնարավորությունների նեղացման</p>	<p>պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելու բացահայտված դեպքեր</p> <p><i>տվյալների աղբյուրը՝ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի տվյալներ, տնտեսական լրագրողների կարծիք</i></p>

Ենթադրություններ. Առաջացել է երկրնտրանքի հարց, և պաշտոնատար անձինք, որպես կանոն, ընտրել են բիզնեսը՝ հատկապես 2010-2011թթ. ընթացքում:

Ռիսկեր. Նույն այդ պետական պաշտոնյաները ուղղակի կամ անուղղակի ձևերով խոչնդոտելու են այս քաղաքականության իրականացումը:

Քաղաքականություն 1.3. Նոր քաղաքականության մշակում՝ հարկ չվճարող կազմակերպությունների անունների բացահայտման գծով

Խոսքը վերաբերում է խոշոր հարկային իրավախախտումների ու դրանց նկատմամբ հարկային ծառայության կողմից կիրառված գործողությունների, պատասխանատվության միջոցների մասին տեղեկատվությունը թափանցիկ և հասարակությանը ավելի հասանելի դարձնելուն: Որոշակի իմաստով սա նորություն է Հայաստանի հարկային վարչարարության պատմության մեջ:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
1.3.1 Հարկային ոլորտում հանրային հսկողության դերակատարությունը բարձր է	<p>Հարկ չվճարող կազմակերպությունների հայտնաբերման գործում հարկային մարմինների աշխատանքների նկատմամբ հասարակության վստահությունը մեծացել է:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ անկախ հարցումների արդյունքներ</i></p>

Ենթադրություններ. նշված քաղաքականությունը կնպաստի հարկ չվճարող կազմակերպությունների թվաքանակի փոքրացմանը և հարկ վճարելու մշակույթի առաջխաղացմանը:

Ռիսկեր. իրավական ոչ ճիշտ իրավիճակներում դա կարող է առաջացնել վնասի հատուցման հայցեր՝ ընդդեմ հարկային ծառայության:

ՆՊԱՏԱԿ 2. ՓՈՔԻ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ՝ «ՓԱՓՈՒԿ» ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՌՄԱՄԲ

Փոքր բիզնեսի հարկումը առաջին հերթին ենթադրում է հարկման արդարացիության ու հավասարության սկզբունքի ապահովում: Օրենքով կասեցված փոքր բիզնեսի հարկման հարաբերականորեն ցածր, բայց արդարացի բեռ, նվազագույնի կհասցվեն ու կպակասեցվեն հաշվետվություններն ու գրանցումները, առավելագույնս կսահմանափակվեն հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումները: Հարկային վարչարարական քայլերը կկապակցվեն փոքր ու միջին բիզնեսի զարգացումը խթանող ծրագրերի հետ, այդ թվում՝ նպատակ ունենալով խուսափել տարբեր գերատեսչությունների կողմից նույն տնտեսավարողի մոտ վարչական ստուգումների կրկնությունից:

Այս նպատակով իրականացվելու է հետևյալ քաղաքականությունը.

- 2.1. փոքր բիզնեսի համար հարկային հաշվետվությունների ու այլ պահանջվող տվյալների քանակության և պարբերականության կրճատում
- 2.2. փաստաթղթաշրջանառությունը փոքր բիզնեսի համար չպետք է ծանր խնդիր լինի, սակայն գրանցումների ծավալները պետք է էականորեն կարգավորվեն
- 2.3. հարկային ծառայությունը ներդնելու է նորաստեղծ փոքր բիզնեսին աջակցելու առանձին ծրագիր
- 2.4. փոքր ձեռնարկություններում ստուգումների պարբերականության կրճատում

Արդյունքում ունենալու ենք ՓՄՁ զարգացմանը չխոչնդոտող հարկային համակարգ:

Սույն նպատակին հասնելու կատարողականության ցուցանիշներն են .

բարձր գնահատական-	եթե սույն նպատակից բխող քաղաքականության 75 տոկոսից ավելին ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել են որպես կատարված,
բավարար գնահատական –	եթե սույն նպատակից բխող քաղաքականության 50 -74 տոկոսն ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել են որպես կատարված,
անբավարար գնահատական-	եթե սույն նպատակից բխող քաղաքականությունն ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել են մինչև 49 տոկոս միջակայքում:

Քաղաքականություն 2.1. Փոքր բիզնեսի համար հարկային հաշվետվությունների ու այլ պահանջվող տվյալների քանակության և պարբերականության կրճատում

Փոքր բիզնեսի համար օրենսդրորեն սահմանված հարկման գործող մեխանիզմները ոչ ամբողջովին են նպաստում վերջիններիս զարգացմանը: Ներկայումս ներկայացվող հարկային հաշվետվությունների ու այլ պահանջվող տվյալների քանակն ու պարբերականությունը բավական մեծ են և անհրապակի խոչընդոտներ են ստեղծում փոքր բիզնեսի ներկայացուցիչների համար: Այս քաղաքականության ներքո նախատեսվում է փոքր բիզնեսի համար սահմանել հարկային հաշվետվությունների ու այլ պահանջվող տվյալների օպտիմալ քանակություն և կրճատել դրանց ներկայացման պարբերականությունը:

Մտորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
2.1.1 Փոքր բիզնեսի կողմից հաշվառման մեխանիզմները պարզեցվել են, հաշվետվությունների թիվը և պարբերականությունն էականորեն նվազել է	մինչև 2008թ. տարեվերջ համապատասխան օրենդրական փոփոխություններ: <i>տվյալների աղբյուրը՝ համապատասխան իրավական ակտեր</i>

Ենթադրություններ. Նշված վարչարարական օրենսդրական փոփոխությունները համահունչ կլինեն երկրում վարվող՝ եկամտային քաղաքականության հետ:

Ռիսկեր. Նշված փոփոխությունները կարող են հանգեցնել, սկզբնական շրջանում, ՓՄՁ կողմից վճարվող հարկերի նվազմանը:

Քաղաքականություն 2.2. *Փաստաթղթաշրջանառությունը փոքր բիզնեսի համար չպետք է ծանր խնդիր լինի, սակայն գրանցումների ծավալները պետք է էականորեն կարգավորվեն*

Տնտեսության մեջ փաստաթղթավորման ոչ պատշաճ մակարդակը հասկապես խոչնդոտում է փոքր հարկ վճարողների ծախսերի ճշգրիտ հաշվառմանը, հանգեցնում գնագոյացման շղթայի խեղաթյուրմանը: Սույն քաղաքականությունը պետք է զուգակցվի հաշվապահական հաշվառման բնագավառում վերափոխումների և փոքր բիզնեսի համար առանձին ստանդարտների սահմանման հետ: Հարկային գրանցումների ծավալը դրան համահունչ պետք է էականորեն փոքրանա:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
2.2.1 Փոքր ձեռնարկությունների փաստաթղթաշրջանառության հաշվառման հարցերը կանոնակարգվել են	մինչև 2008թ. տարեվերջ՝ համապատասխան օրենդրական փոփոխություններ: <i>Տվյալների աղբյուրը՝ համապատասխան իրավական ակտեր</i>

Ենթադրություններ. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և այլ կառույցներ զուգահեռաբար իրականացնում են օժանդակող գործառույթներ հաշվապահական հաշվառման վարման ուղղությամբ և այլն:

Ռիսկեր. Փաստաթղթաշրջանառության նկատմամբ ներկայացվող պահանջները ամբողջությամբ չեն պահպանվի խոշոր հարկ վճարողների կողմից:

Քաղաքականություն 2.3. Հարկային ծառայությունը ներդնելու է նորաստեղծ փոքր բիզնեսին աջակցելու առանձին ծրագիր

Այս քաղաքականությունը նպաստում է առաջին անգամ ձեռնարկատիրությանը զբաղվելու փորձ կատարողներին համարձակորեն մտնելու հարկային դաշտ: Նման մոտեցման տնտեսական արդյունավետությունն արդարացված է նոր հարկատուի առաջացման և հետագայում լրիվ չափով հարկերի վճարման տեսանկյունից:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
2.3.1 Նորաստեղծ փոքր բիզնեսի շրջանակներում հարկային «մշակույթը» ձևավորված է	<p>նորաստեղծ փոքր բիզնեսի աջակցելու ծրագրի ընդունում:</p> <p>ՓՄՁ-ի դրական վերաբերմունքը հարկային վարչարարության հանդեպ բարելավվել է 20%-ով 2009 թվականին և 30%-ով 2011 թվականին:</p> <p><i>տվյալների աղբյուրը՝ համապատասխան իրավական ակտեր, հարկային ծառայության կողմից հրապարակվող տվյալներ, հասարակական հարցումների արդյունքներ</i></p>

Ենթադրություններ. Երկրում վարվող տնտեսական քաղաքականությունը ևս նպաստում է այս քաղաքականության զարգացմանը: Նորաստեղծ փոքր բիզնեսի աջակցելու ծրագիրը խթանում է նորելուկ գործարարների աշխուժացմանը և հետագայում հանգեցնում նրանց կողմից հարկերի լիարժեք վճարմանը:

Ռիսկեր. տնտեսության այլ բնագավառներում առկա մոտեցումները, օրինակ՝ արտոնյալ վարկերի չտրամադրելը, հնարավորություն չեն տալիս ամբողջականորեն իրագործելու ՓՄՁ օժանդակության ծրագիրը:

Քաղաքականություն 2.4. Փոքր ձեռնարկություններում ստուգումների պարբերականության կրճատում

Հաշվի առնելով փոքր ձեռնարկատերերի կողմից թույլ տրված հարկային խախտումների փոքր ծավալների և դրանց հայտնաբերմանն ուղղված հարկային ծառայության ջանքերի արդյունավետությունը՝ տնտեսապես արդարացված չէ մեծածավալ ստուգումների անցկացումը: Դա հաճախ հանգեցնում է փոքր ձեռնարկատերերի անտեղի անհանգստությունների: Նպատակահարմար է կրճատել ստուգումների պարբերականությունը՝ դրա իրականացումը զուգակցելով ստուգումների արդյունավետության բարձրացման հետ: Նախատեսվում է ներդնել ստուգումների նոր ռազմավարություն, որը ենթադրում է ստուգումների իրականացում ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի միջոցով և դրա հիման վրա հարկ վճարողների մոտ անցկացվող ստուգումների պարբերականության կրճատում:

Մտորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև բերվում են անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>2.4.1 Փոքր բիզնեսի մոտ ստուգումների թիվն էականորեն պակասել է</p> <p>2.4.2 Կրճատվել են հարկային ծառայողների և փոքր ձեռներեցների անտեղի շփումները: Ձևավորվել է «հանգիստ» աշխատելու մթնոլորտ:</p>	<p>Մկսած 2009թ. փոքր ձեռնարկատերերի մոտ իրականացվող հարկային ստուգումները կրճատվել են՝ յուրաքանչյուր տարի՝ առնվազն 20 տոկոսային կետով՝ նախատեսելով 2011թ. ստուգումների թվի կրճատում շուրջ 50 տոկոսային կետով 2008թ. նկատմամբ:</p> <p><i>տվյալների աղբյուրը՝ համապատասխան իրավական ակտեր, հարկային ծառայության կողմից հրապարակվող տվյալներ, հասարակական հարցումների արդյունքներ</i></p>

Ենթադրություններ. Հարկային ծառայությունում լիարժեք գործարկվում է ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգը (ՌԶՄՀ):

Ռիսկեր. Պետական այլ ստուգող մարմինները շարունակում են իրականացնել չարդարացված և հաճախակի ստուգումներ, քանի որ կառավարությանը չի հաջողվում միասնականացնել տարբեր պետական մարմինների կողմից իրականացվող ստուգումները:

ՆՊԱՏԱԿ 3. ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ

Հարկային ծառայությունում կոռուպցիոն ռիսկերի սահմանափակման, անաչառ և ազնիվ աշխատանքային մթնոլորտի ապահովման նպատակով՝

ա) հնարավոր կարճ ժամկետում կվերանայվեն հարկային ծառայողների վարձատրության, պարգևատրման և սոցիալական պաշտպանվածության գործող համակարգերը,

բ) կիրականացվեն հարկային ծառայողների, որպես կանոն, գրավոր ատեստավորումներ՝ ինչն այլ գնահատումների ու միջոցառումների զուգորդմամբ հնարավորություն կտա ձեռքագատվելու ոչ արհեստավարժ հարկային ծառայողներից: Ատեստավորման հանձնաժողովը կարող է լինել միջգերատեսչական բնույթի: Համակարգը կհամալրվի երիտասարդ, թարմ ներուժով, որի աշխատանքը փորձառուների հետ կհանգեցնի նոր արդյունքի,

գ) կներդրվի հարկային ծառայողների պարտադիր ուսուցման, վերապատրաստման, կադրերի ընտրության և պաշտոնական առաջխաղացման ժամանակակից ծրագիր, կշարունակվի և կբարելավվի հարկային ծառայողների ռոտացիայի ընթացակարգը,

դ) համապատասխան ուղեցույցների և ձեռնարկների միջոցով կապահովվի հարկային վարչարարության ընթացակարգերի միատեսակ կիրառումը բոլոր հարկ վճարողների նկատմամբ և բոլոր հարկային ծառայողների կողմից,

ե) հարկային ծառայողի համար վարքագծի կանոնների պահպանումը կդառնա նրա աշխատանքի գնահատման ցուցանիշներից մեկը, հարկային ծառայությունում կուժեղացվի ներքին աուդիտի գործառույթը և սեփական անձնակազմի նկատմամբ ներքին հետաքննությունների անցկացման արդյունավետությունը,

զ) կվերանայվեն ու կպարզեցվեն հարկային ծառայության պաշտոնատար անձանց գործողությունների գանգատ-բողոքների քննության ընթացակարգերը և կապահովվի արդյունքների թափանցիկությունը: Այդ նպատակով կգործարկվի նաև այլ գործիք՝ նոր աստիճանի «թեժ գիծ», որ հնարավորություն կտա դասակարգել ու օգտագործել ստացված տեղեկատվությունը և որի արդյունքային հաշվետվությունը պարբերաբար կներկայացվի ԵՎԲԱԽ ու հանրությանը:

Արդյունքում ունենալու ենք անկաշառ հարկային համակարգ:

Սույն նպատակին հասնելու կատարողականության ցուցանիշներն են .

բարձր գնահատական-	Եթե սույն նպատակից բխող քաղաքականության 75 տոկոսից ավելին ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել են որպես կատարված
բավարար գնահատական –	Եթե սույն նպատակից բխող քաղաքականության 50-74 տոկոսն ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել են որպես կատարված
անբավարար գնահատական-	Եթե սույն նպատակից բխող քաղաքականությունն ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել են մինչև 49 տոկոս միջակայքում:

Այս նպատակով իրականացվելու է հետևյալ քաղաքականությունը.

- 3.1. Հարկային ծառայողների աշխատավարձերի և այլ հատուցումների բարձրացում, արդյունավետ խրախուսման համակարգի ձևավորում
- 3.2. Հարկային ծառայողների առաջխաղացման գործուն համակարգի ներդրում՝ որպես բաղադրիչ դիտարկելով նաև մասնագիտական վերապատրաստումը
- 3.3. Հարկային ծառայողների ատեստավորման օբյեկտիվ մեխանիզմի ներդրում
- 3.4. Հարկային մարմնում «ներքին աուդիտի» գործառույթի ըստ էության ներդրում
- 3.5. Հարկային վարչարարական ընթացակարգերի միատեսակ կիրառման ապահովում հարկ վճարողների նկատմամբ

3.6. Հարկային ծառայության նկատմամբ բողոքարկման համակարգի էական վերակառուցում, ապահովելու համար հաշվետվականություն, արդյունավետություն: Նոր աստիճանի «թեժ գծի» գործարկում:

Քաղաքականություն 3.1. *Հարկային ծառայողների աշխատավարձերի և այլ հատուցումների բարձրացում, արդյունավետ խրախուսման համակարգի ձևավորում*

Վերջին 5 տարվա ընթացքում հարկային ծառայության աշխատողների աշխատավարձի բազային չափը փոփոխության չի ենթարկվել, չնայած որ պետական այլ ծառայություններում այն շուրջ 50 տոկոսի չափով բարձրացել է: Հաշվի առնված չէ նաև այս տարիների ընթացքում սպառողական գների աճի ազդեցությունը հարկային ծառայողների աշխատավարձերի գնողունակության վրա: Ըստ էության, հարկային ծառայությունում չի գործում նյութական խրախուսման ժամանակակից համակարգը:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
3.1.1 Հարկային ծառայողների եկամուտների աճ և սոցիալական պաշտպանվածության բարձրացում	2009թ. հարկային ծառայողների բազային աշխատավարձի բարձրացում 70 տոկոսով, 2010-2011թթ.՝ յուրաքանչյուր տարի բազային աշխատավարձի բարձրացում 20 տոկոսային կետով: <i>Տվյալների աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե</i>

Ենթադրություններ. հարկային ծառայողների աշխատավարձը համապատասխանում է համապատասխան մասնագիտությամբ մասնավոր հատվածում վճարվող աշխատավարձին և խթանում է հարկային ծառայությունում աշխատելը:

Ռիսկեր. Պետական բյուջեյում առկա չեն համապատասխան միջոցներ կամ արձանագրվել է սղաճի էական աճ:

Քաղաքականություն 3.2. *Հարկային ծառայողների առաջխաղացման գործուն համակարգի ներդրում՝ որպես բաղադրիչ դիտարկելով նաև մասնագիտական վերապատրաստումը*

Հարկային ծառայությունում պաշտոնային առաջխաղացման համակարգը հիմնված չէ բացառապես մասնագիտական ունակությունների գնահատման վրա: Գործուն չէ հարկային ծառայողների վերապատրաստման մեխանիզմը և այն իրականացվում է ոչ պարբերաբար՝ առանց ուսումնական հատուկ ծրագրերի:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
3.2.1 Հարկային ծառայությունը համարված է արհեստավարժ հարկային ծառայողներով, առկա է պաշտոնական առաջխաղացման գործուն համակարգ՝ հիմնված հատկապես գիտելիքների վրա	յուրաքանչյուր տարի 300 հարկային ծառայողների վերապատրաստում: <i>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայություն:</i>

Ենթադրություններ. հանրային ծառայության մասին օրենդրությունը համահունչ է հարկային ծառայությունում վարվող կադրային քաղաքականությանը:

Ռիսկեր. բացակայում են հարկային ծառայողների վերապատրաստման կազմակերպման ֆինանսական աղբյուրներ, չկան արդյունավետ և միջազգայնորեն ճանաչված ուսումնական ծրագրեր:

Քաղաքականություն 3.3. *Հարկային ծառայողների ատեստավորման օբյեկտիվ մեխանիզմի ներդրում*

Հարկային ծառայողների ատեստավորման գործող համակարգը թույլ չի տվել լիարժեք գնահատել հարկային ծառայողների մասնագիտական ունակությունները: Ատեստավորման արդյունքներով չեն ապահովվել համապատասխան միջոցառումների (հետագա պաշտոնական առաջխաղացում, վերապատրաստման կազմակերպում և այլն) իրականացումը:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
3.3.1 Հարկային ծառայությունում ներդրված է ատեստավորման գործուն և արդյունավետ համակարգ	<p>համապատասխան օրենսդրության առկայություն: Ատեստավորման արդյունքների բողոքարկումների թիվը ցածր է:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հարկային ծառայություն</i></p>

Ենթադրություններ. Կրնդունվի համապատասխան օրենսդրություն, որը համահունչ կլինի հանրային ծառայության օրենսդրության հետ: Հարկային ծառայությունը ստանալու է անհրաժեշտ մեթոդական օժանդակություն ՀՀ կառավարության աշխատակազմից:

Ռիսկեր. Հարկային ծառայության աշխատողների ստվար զանգվածը առաջին ատեստավորումների ժամանակ չի անցնի թեստավորումը, առկա չի լինի վերապատրաստման օպերատիվորեն օժանդակող համակարգ և կառաջանա կադրային «սով»:

Քաղաքականություն 3.4. *Հարկային մարմնում «ներքին աուդիտի» գործառույթի՝ ըստ էության ներդրում*

Ներքին աուդիտի գործառույթը ներկայումս ամբողջականորեն նկարագրված չէ և ըստ էության չի իրականացվում: Վարքագծի կանոնները և դրանց պահանջների նկատմամբ վերահսկողությունը կրում են ձևական բնույթ: Այս գործառույթի ուժեղացումը կնպաստի ոչ միայն ներքին կարգապահության բարձրացմանը, այլև կնպաստի հարկային ծառայության կայուն և հետևողական գործելակերպին: Այս գործընթացներն իրականացվելու են հանրային ծառայողների շահերի բացահայտման և շահերի բախման բացառման նպատակով իրականացվող բարեփոխումներին զուգընթաց:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>3.4.1 Բոլոր հարկային ծառայողներն առաջնորդվում են վարքագծի կանոններով</p> <p>3.4.2 Ստեղծված է «ներքին աուդիտի» արդյունքների վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկման ընթացակարգ</p>	<p>Հարկային ծառայությունը էականորեն մեծացնում է հրապարակումների միջոցով գործառույթի թափանցիկությունը:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ անկախ հարցումների արդյունքներ, հարկային ծառայություն</i></p>

Ենթադրություններ. ուժեղ ներքին աուդիտը զուգակցվում է.

- պաշտոնների հատակ նկարագրերի առկայությամբ,
- հարկային ծառայողների պաշտպանության արդյունավետ համակարգով:

Ռիսկեր. ներքին աուդիտի գործառույթի ուժեղացումը հանգեցրել է հարկային ծառայողների շրջանում անտեղի «անհանգստությունների»՝ ընթացիկ գործառույթների իրականացման ժամանակ: Այլ կերպ ասած, ծառայողական քննությունների հանձնաժողովն սկզբնական շրջանում կարող է դրսևորել չափազանցված խստություն:

Քաղաքականություն 3.5. *Հարկային վարչարարական ընթացակարգերի միատեսակ կիրառման ապահովում հարկ վճարողների նկատմամբ*

Հարկ վճարողները սովորաբար դժգոհում են հարկային վարչարարության «հորիզոնաբար» արդարացի չլինելուց: Միաժամանակ, ընթացակարգերի սահմանված չլինելը կամ դրանց անհստակությունը պարարտ հող են տարբեր հարկային տեսչություններում «սեփական» լուծումներ տալու համար: Իրավիճակը շտկվելու ինչպես հարկային ծառայության ներսում միասնական ընթացակարգերի սահմանմամբ, այնպես էլ «հաճախ տրվող հարցեր» գործիքի օգնությամբ՝ հարկ վճարողների համար:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>3.5.1 Հարկային վարչարարության ընթացակարգերը միատեսակ են կիրառվում բոլոր հարկ վճարողների նկատմամբ</p>	<p>սահմանված ընթացակարգերի քանակի էական աճ:</p> <p>ընթացակարգերի վերաբերյալ ձեռնարկների, ուղեցույցների հրապարակում և դրանց գծով ուսուցումների ծավալների աճ:</p> <p>հարկ վճարողների՝ հարկային ծառայողների կատարված պարտականություններից զոհունակության աստիճանի բարձրացում՝ յուրաքանչյուր տարի 10 տոկոսային կետով:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ անկախ հարցումների արդյունքներ, հարկային ծառայություն</i></p>

Ենթադրություններ. Հարկային ծառայության ներսում մասնագիտական և տեխնիկական հաղորդակցության մակարդակն էականորեն բարձր է նման ամբողջական ընթացակարգերի իրականացման համար:

Ռիսկեր. Հետաքննչական, քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթները պարունակում են առանձնահատկություններ: Դա ստեղծում է օբյեկտիվ և իրավակազմակերպական դժվարություններ:

Քաղաքականություն 3.6. *Հարկային ծառայության նկատմամբ բողոքարկման համակարգի էական վերակառուցում, ապահովելու համար հաշվետվականություն, արդյունավետություն: Նոր աստիճանի «թեժ գծի» գործարկում*

Գանգատարկման գործող համակարգը լիովին չի գոհացնում հարկ վճարողների սպասումները: Իրականում այն պետք է դառնա հարկատուի և հարկային ծառայողի գործողություններում անկողմնակալության և վստահության գրավական:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>3.6.1 Արդյունավետ գործող գանգատարկման համակարգի առկայություն և արդյունքների թափանցիկություն</p> <p>3.6.2 Արդյունավետ ընթացակարգային հիմքի վրա գործող նորացված «թեժ» գիծ</p>	<p>Հարկ վճարողների կողմից ներկայացվող գանգատների թվի աճ:</p> <p>Գանգատարկման հանձնաժողովի կողմից հարկ վճարողների օգտին կայացրած որոշումների աճ:</p> <p>Հարկային ծառայությունում գանգատարկման ընթացակարգերի նկատմամբ հարկ վճարողների կողմից վստահության մեծացում՝ յուրաքանչյուր տարի 20 տոկոսային կետով:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ անկախ հարցումների արդյունքներ, հարկային ծառայության գանգատարկման հանձնաժողովի արդյունքներ</i></p>

Ենթադրություններ. վարչական դատարանները կդառնան շատ ավելի մասնագիտացված հարկային հարցերում, և կձևավորվի պրոֆեսիոնալ քննարկման իրական մթնոլորտ «հարկ վճարողներ – հարկային ծառայություն – դատարաններ»:

Ռիսկեր. աճել է չարդարացված առիթներով հարկային ծառայողների գործողությունների գանգատարկման դեպքերի թիվը: Գանգատարկման հանձնաժողովի որոշումները պարտադիր կլինեն բոլորի կողմից կատարման համար:

ՆՊԱՏԱԿ 4. ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ՎՃԱՐՄԱՆ (ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ) ՄԿՋՔՈՒՆՔԻ ԱՄՔՈՂՋԱԿԱՆ ՆԵՐԿՐՈՒՄ

Էականորեն կնվազեցվեն հարկային հաշվետվություններ ընդունելիս հարկային ծառայող-հարկ վճարող շփումները, ոչ ուշ քան մեկ տարվանից սկսած՝ հաշվետվությունները կընդունվեն, որպես կանոն, միայն փոստով կամ էլեկտրոնային փոստով: Հարկ վճարողների և հարկային մարմինների իրավունքների պաշտպանության նպատակով կսկսվեն օրենքով կարգավորվել հարկային մարմնի կողմից երրորդ անձանցից տեղեկություններ ստանալու ու տրամադրելու, հարկային մարմնում կուտակվող տեղեկությունների օգտագործման հարցերը, այդ թվում՝ եկամուտներ չհայտարարագրած կամ թերհայտարարագրած անձանց բացահայտելու համար:

Հարկային ծառայությունն էականորեն բարելավելու է հարկ վճարողներին հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմը և ծավալները: Բազմազանվելու, որակապես փոփոխվելու և աճելու է հարկ վճարողներին իրազեկման ու այլ ծառայությունների շրջանակը: Առաջիկա տարում կներդրվի հարկ վճարողներին ծանուցումների ներկայացնելու ավտոմատ ծրագիր:

Հարկային ծառայությունը կապահովի իր աշխատանքների հնարավորինս թափանցիկությունը՝ հրապարակելով իր ծրագրերը, աշխատանքի արդյունքները, ընթացքի վերաբերյալ հաշվետվությունները:

Արդյունքում ունենալու ենք հարկերը կամավոր վճարելը «ձեռնտու» համարվող համակարգ: Դա լինելու է ինչպես հարկ վճարողի, այնպես էլ հարկային ծառայության վստահ մոտեցումը:

Սույն նպատակին հասնելու կատարողականության ցուցանիշներն են.

- բարձր գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականության 75 տոկոսից ավելին ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել են որպես կատարված.
- բավարար գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականության 50 -74 տոկոսն ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել են որպես կատարված
- անբավարար գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականությունն ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել են մինչև 49 տոկոս միջակայքում:

Որպես հատուկ կատարողական ցուցանիշ՝ այս նպատակի համար հանդես է գալիս միջազգային հեղինակավոր “Գործարարությամբ Զբաղվելը” (Doing Business 2008) դասակարգման մեջ ներառվող ցուցանիշների բարելավումը:

Այս նպատակի ներքո իրականացվելու է հետևյալ քաղաքականությունը.

- 4.1. Անցում հաշվետվությունները հարկային մարմիններ փոստով կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելուն
- 4.2. Հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի ներդրում՝ ներառելով նաև հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ իրականացումը
- 4.3. Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծում
- 4.4. Հարկային ծառայությունն էականորեն բարելավելու է հարկ վճարողներին հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմը

Քաղաքականություն 4.1. *Անցում հաշվետվությունները հարկային մարմիններին փոստով կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացմանը*

Վերջին տարիներին գործող հաշվետվությունների հարկային ծառայությանը հանձնման համակարգն իրեն արդեն լիովին սպառել է՝ հարկային վարչարարության առջև դրված նոր խնդիրների լուծմամբ :

Մտորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
4.1.1 Հարկային մարմիններ հաշվետվությունները ներկայացվում են մեծամասամբ փոստով կամ էլեկտրոնային տարբերակով	Յուրաքանչյուր տարի էլեկտրոնային եղանակով և փոստով ներկայացվող հաշվետվությունների 20 տոկոսով տեսակարար կշռի ավելացում՝ նախորդ տարվա նկատմամբ: <i>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայություն</i>

Ենթադրություններ.

1. Այս քաղաքականությունը համահունչ կլինի երկրում որդեգրված տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ SS) համակարգի զարգացման ընդհանուր հայեցակարգին:

2. Հարկային ծառայության SS ստորաբաժանումը հասցնելու է գործարկել սույն փաստաթղթի գործողությունների ժամանակացույցով նախատեսված ենթակառուցվածքները:

Ռիսկեր.

1. Համապատասխան ֆինանսավորման աղբյուրների բացակայություն:
2. Հարկ վճարողների՝ SS համակարգերից օգտվելու փոքր կարողություններ:

Քաղաքականություն 4.2. Հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի ներդրում՝ ներառելով նաև հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ իրականացումը

Ներկայումս հարկ վճարողների կողմից հարկային մարմիններ ներկայացվող հաշվետվությունները ենթարկում են «ձեռքով» մշակման՝ մի քանի փուլերով: Գործող համակարգը հնարավորություն չի ընձեռում արագորեն մուտքագրել և «ստուգել» ներկայացվող հաշվետվությունները՝ աշխատատար և ժամանակատար դարձնելով այդ գործընթացը:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>4.2.1 Հաշվետվությունների մշակում՝ հիմնականում ավտոմատացված համակարգի միջոցով</p> <p>4.2.2 Համակարգը ավտոմատ ձևավորում և ուղարկում է հիշեցում-ծանուցումները</p>	<p>Մինչև 2009թ. վերջ հաշվետվությունների 50 տոկոսից ավելի ավտոմատացված մշակում, մինչև 2011թ. վերջ բոլոր հաշվետվությունների ավտոմատացված մշակում:</p> <p>Մինչև 2009թ. վերջ անհրաժեշտ ծանուցումների մինչև 30 տոկոսը, 2010թ. անհրաժեշտ ծանուցումների մինչև 50 տոկոսը և 2011թ. բոլոր անհրաժեշտ ծանուցումների ներկայացում:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայություն</i></p>

Ենթադրություններ. Հարկային ծառայության ՏՏ-ի ստորաբաժանումը հասցնելու է գործարկել սույն փաստաթղթի գործողությունների ժամանակացույցով նախատեսված ենթակառուցվածքները ~~ստեղծումը~~:

Ռիսկեր. Մեծաթիվ հիշեցում-ծանուցումներ ուղարկվելու դեպքում կոնկրետ հարկ վճարողին հասցնելու դժվարություն: Հարկային ծառայության տեղեկատվական բազան բավարար մակարդակի թարմացված չլինելը հանգեցնում է անհասցե հիշեցում-ծանուցումների ներկայացնելուն:

Քաղաքականություն 4.3. *Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծում*

Ներկայումս հարկային ծառայության կողմից հարկ վճարողներին ծառայությունների տրամադրումը իրականացվում է հարկ վճարողների սպասարկման բաժինների կողմից: Մատուցվող ծառայությունները խիստ սահմանափակ և ոչ բավարար լինելով հանդերձ՝ պատշաճ մակարդակով հասանելի չեն հարկ վճարողներին:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>4.3.1 Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների առկայություն և այդ կենտրոնների միջոցով ծառայությունների մատուցում</p> <p>4.3.2 Գործում է հարկատուներին հետաքրքրող տեղեկատվության տրամադրման բազմազիժ «հեռախոսային կենտրոն»</p>	<p>Մինչև 2011թ. սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների թվի մեծացում՝ յուրաքանչյուր տարի 15 տոկոսային կետով:</p> <p>«Հեռախոսային կոնտրոնից» օգտվողներին տրամադրվող պատասխանների որակի էական բարձրացում՝ յուրաքանչյուր տարի հեռախոսազանգերն ավելացնելով 20 տոկոսով:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ անկախ հարցումների արդյունքներ, հարկային ծառայություն</i></p>

Ենթադրություններ. Հարկային ծառայությունն ստացել է բավարար աջակցություն ՀՀ կառավարությունից՝ հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման համար:

Ռիսկեր. Սկզբնական շրջանում հարկ վճարողների մեծաքանակ հոսքերը դժվարացնում են սպասարկման կենտրոնների աշխատանքները:

Քաղաքականություն 4.4. *Հարկային ծառայությունը հարկ վճարողներին հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմի էական բարելավում*

Ներկայումս հարկային ծառայության կողմից հարկային օրենսդրության կիրառման վերաբերյալ հարկ վճարողներին տրամադրվող պարզաբանումները չեն բավարարում վերջիններիս պահանջները: Պարզաբանումների տրամադրման մեխանիզմը խիստ սահմանափակված է «Իրավական ակտերի մասին»¹ ՀՀ օրենքով:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրագործման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև բերվում են անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>4.4.1 Հարկ վճարողները բավարարված են հարկային օրենսդրության կիրառման մասին տրամադրված պարզաբանումներով, դրանք հետևողական են և առանց ուշացումների:</p>	<p>Մինչև 2008թ. վերջ համապատասխան օրենսդրական փոփոխության առկայություն:</p> <p>2009-2011թթ. տրվող պարզաբանումների քանակի ավելացում՝ յուրաքանչյուր տարի 15 տոկոսային կետով:</p> <p>Հարկային օրենսդրության կարևորագույն հարցերի վերաբերյալ պարզաբանումների հրապարակում և լուսաբանում:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ անկախ հարցումների արդյունքներ, հարկային ծառայություն, տեղեկատվության այլ աղբյուրներ</i></p>

Ենթադրություններ. Հարկային ծառայության կողմից տրամադրվող պարզաբանումների մեխանիզմը համահունչ է դատական մարմինների կողմից կայացվող որոշումներին:

Ռիսկեր.

1. Օգտվելով պարզաբանումների ստացման հնարավորություններից՝ հարկային ծառայությունը հարկ վճարողներից կարող է ստանալ պարզաբանման կարիք չունեցող բազմատիվ դիմումներ:
2. Հարկային ծառայությունը չի կարողանում ժամանակին ձևավորել «գիտական» և փորձառու կարողություններ:

¹ ՀՀՊՏ 2002 N 15(190), 21.05.02

ՆՊԱՏԱԿ 5. ՀԱՐԿԱՅԻՆ ՍՏՈՒՈՒՄՆԵՐԻ ԼՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համատարած կասկածամտության և յուրաքանչյուր հարկ վճարողի՝ որպես հարկերի վճարումից հավանական խուսափող դիտելու պրակտիկան կփոխարինվի վերլուծությունների և ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգով: Այս նպատակով կիրականացվեն անհրաժեշտ կառուցվածքային, կադրային և ուսումնական միջոցառումներ: Կսահմանվեն ստուգումների անցկացման ընթացակարգեր՝ ըստ ոլորտների, հարկ վճարողների առանձին խմբերի: 2009 թվականից կիրականացվի հարկման տեսանկյունից ռիսկային ոլորտների, կարևորագույն ապրանքատեսակների և առանձին հարկ վճարողների մշտական մոնիթորինգ: 2010թ. կունենանք բարեխիղճ հարկ վճարողների ընտրություն ու դրանց նկատմամբ «թեթևացված» հարկային վարչարարության հստակ ու գործողության մեջ դրված մեխանիզմ: ԵՎԲԱԽ-ը առաջիկա վեց ամիսների ընթացքում կքննարկի՝

ա) հարկային ստուգումների անցկացման ռազմավարությունը: Շինարարության, էլեկտրաէներգիայի, գազի, լեռնահանքային արդյունաբերության, ջրային տնտեսության, առևտրի և այլ կարևոր՝ դասակարգվող ոլորտներում ստեղծվելու են առանձին ենթածրագրեր,

բ) գերավճարների, մեծ չափի հարկային վնասների, ապառքների նվազեցման միջոցառումները,

գ) իրավասու պետական մարմինների հետ վարչական համագործակցության և փոխադարձ աջակցության աշխատանքային ծրագիրը:

Կվերակառուցվեն հարկային մարմնի օպերատիվ հետախուզության, հետաքննության և քննչական ստորաբաժանումների աշխատանքները՝ դրանք դարձնելով ծրագրային, նպատակային և օրենքի սահմաններում թափանցիկ:

Արդյունքում ունենալու ենք ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգ: Այդ համակարգը կապահովի հարկային հսկողության թափանցիկությունը և կբարձրացնի հարկ վճարողների՝ կամովոր հարկերը վճարելու վարքագիծը:

Սույն նպատակին հասնելու կատարողականության ցուցանիշներն են.

բարձր գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականության 75 տոկոսից ավելին ըստ իր կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է որպես կատարված

բավարար գնահատական – եթե սույն նպատակից բխող քաղաքականության 50-74 տոկոսն ըստ իր կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է որպես կատարված

անբավարար գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականությունն ըստ իր կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է մինչև 49 տոկոս միջակայքում:

Այս նպատակով իրականացվելու է հետևյալ քաղաքականությունը.

- 5.1. Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում
- 5.2. «Կամերալ ուսումնասիրությունների» ինստիտուտի վերակառուցում՝ հիմնված տվյալների մշակման ավտոմատ համակարգի և տվյալների ժամանակակից բազայի վրա
- 5.3. Հարկային գերավճարների, ներառյալ ԱԱՀ գծով, ետ վերադարձման ավտոմատացված համակարգի ներդրում, ինչպես նաև հարկային ապառքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում
- 5.4. Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական, հետաքննության և քննչական գործառնությունների նպատակայնության մեծացում, հարկային ծառայության այլ գործառնությունների հետ փոխգործության օպտիմալ սխեմայի որոշում
- 5.5. Կանխամտածված (չարամտորեն) հարկային օրենսդրությունը խախտողների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների խստացում: Միաժամանակ, նորմատիվորեն պետք է սահմանվի դրա տարբերությունը՝ օրենքի շրջանակներում թույլատրելի հարկային պլանավորումից:

Քաղաքականություն 5.1. *Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում*

Հարկային ծառայության կողմից ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգը կառուցված է հիմնականում սուբյեկտիվ գործոնների վրա (կոնկրետ մարդու փորձառության, այլ տվյալներ): Նման մոտեցումը հնարարավորություն չի տալիս ապահովելու հարկային հսկողության թափանցիկությունը և կանխատեսելիությունը: Ստուգվող հարկ վճարողները հաճախ հայտնվում են անհավասար պայմաններում չստուգվողների նկատմամբ:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրագործման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև բերվում են անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
5.1.1 Ստուգումներն իրականացվում են ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի (ՌՉՍՀ) ներդրման միջոցով	2010թ. ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ամբողջական գործարկում: <i>Տվյալների աղբյուրը՝ անկախ հարցումների արդյունքներ, հարկային ծառայություն, տեղեկատվության այլ աղբյուրներ</i>

Ենթադրություններ. ռիսկային չափանիշների հիման վրա հարկ վճարողների ընտրության համակարգը գործում է հարկ վճարողների կողմից ինքնագնահատման համակարգի «խաղի կանոնների» ընդունման պայմաններում:

Ռիսկեր. ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի կիրարկման սկզբնական շրջանում հարկային պարտավորությունները թերհայտարարագրող ոչ բոլոր հարկ վճարողները կհայտնվեն այսպես կոչված «կարմիր» զծում:

Քաղաքականություն 5.2. *Կամերալ ուսումնասիրությունների ինստիտուտի վերակառուցում՝ հիմնված տվյալների մշակման ավտոմատ համակարգի և տվյալների ժամանակակից բազայի վրա*

Ներկայումս հարկային ծառայության կողմից իրականացվող ստուգումներն անցկացվում են բացառապես հարկ վճարողների գրասենյակներում: Գործում է հարկային ծառայությունում կամերալ ուսումնասիրությունների ընտրանքային համակարգ, որը հնարավորություն չի տալիս միանշանակ կերպով ճշտելու հարկ վճարողների բոլոր հարկային պարտավորությունները:

Կամերալ ուսումնասիրությունների ինստիտուտի զարգացման և գործունակության բարձրացման նպատակով նախատեսվում է մշակել միջոցառումներ՝ վարչական ռեգիստրների (սեփականության իրավունքի, ձեռնարկատիրական գործունեության իրավունքի, քաղաքացիական կացության, մաքսային, սոցիալական և այլ ռեգիստրներ) և «քվադի-ֆիսկալ» ոլորտի ռեգիստրների (էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայություններ) տեղեկությունները կայուն պարբերականության հիմքով ստանալու և օգտագործելու ուղղությամբ:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
5.2.1 Կամերալ ուսումնասիրությունը դառնում է «սպասարկման գործառնություն» «տվյալների մշակման» պարտադիր ընթացակարգ	Կամերալ ուսումնասիրությունների նոր ընցակարգերը սահմանված են համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարման միջոցով: <i>Տվյալների աղբյուրը՝ համապատասխան իրավական ակտեր</i>

Ենթադրություններ. Կամերալ ուսումնասիրությունների պրակտիկան աստիճանաբար փոխարինվելու է ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգով:

Ռիսկեր. Կամերալ ուսումնասիրությունների անցկացումը բարդացել է հարկ վճարողների կողմից տեխնիկական սխալներով ներկայացվող հաշվետվությունների թվի աճով:

Քաղաքականություն 5.3. *Հարկային գերավճարների, ներառյալ ԱԱՀ գծով, վերադարձման ավտոմատացված համակարգի ներդրում, ինչպես նաև հարկային ապառքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում*

Վերջին տարիներին հարկային եկամուտների հավաքագրման աճին զուգընթաց ավելացել են ինչպես հարկային գերավճարները (հատկապես՝ ԱԱՀ-ի գծով), այդ գումարների վերադարձի և հաշվանցման հայտերի թիվը, այնպես էլ հարկային ապառքները: Գերավճարների վերադարձի գործող համակարգը մեծամասամբ չի բավարարում հարկ վճարողների պահանջները՝ հայցվող գումարների հիմնավորվածության և բուն վերադարձի ընթացակարգերի ձգձգվածության ու բարդության պատճառով, իսկ հարկային ապառքների նվազեցմանն ուղղված միջոցառումները էականորեն բարելավման կարիք ունեն:

Մտորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
5.3.1 Հարկային գերավճարները հաշվանցվում կամ վերադարձվում են ավտոմատացված համակարգի միջոցով 5.3.2 Հարկային ապառքների նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրն ընդունված է	Ռիսկերի կառավարման հիման վրա հարկային գերավճարների վերադարձի ավտոմատացված համակարգի լիարժեք կիրառում՝ մինչև 2011թ. վերջ: Յուրաքանչյուր տարի ընթացիկ հարկային ապառքների նվազեցում: <i>Տվյալների աղբյուրը՝ համապատասխան իրավական ակտեր</i>

Ենթադրություններ. գերավճարները հաշվանցվում են, կամ վերադարձի ավտոմատացված համակարգը պարտադիր կերպով զուգակցվում է տնտեսությունում փաստաթղթաշրջանառության մակարդակի բարձրացման ապահովմամբ: Դատական և հարկադիր գանձող մարմինները բավարար չափով կաջակցեն հարկային ապառքների գանձման և բռնագանձման գործընթացներին:

Ռիսկեր.

1. Գերավճարների հաշվանցման կամ ետ վերադարձի ավտոմատացված համակարգի գործարկման սկզբնական շրջանում կտրուկ ավելանում են հաշվանցվող կամ ետ վերադարձվող գումարները՝ ստեղծելով հարկերի հավաքագրման ցուցանիշի ապահովման խնդիրներ: Մեծանում է ԱԱՀ-ի չհիմնավորված դեբետային մնացորդների հայտարարագրված ծավալը:

2. Խոշոր կազմակերպությունների ապառքների գանձման գործընթացը կհանգեցնի դրանց սնանկության:

Քաղաքականություն 5.4. *Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական, հետաքննության և քննչական գործառնությունների նպատակայնության մեծացում, հարկային ծառայության այլ գործառնությունների հետ փոխգործության օպտիմալ սխեմայի որոշում*

Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում, ինչպես նաև «Օպերատիվ հետախուզության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված հարկային ծառայության գործող քննչական, հետաքննչական և նորացվող գործառնություններով օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումներն իրենց ընթացիկ աշխատանքներում կարիք ունեն առավել արդյունավետ դարձնելու հարկային ծառայության այլ ստորաբաժանումների, ինչպես նաև միմյանց միջև տեխնիկական և մասնագիտական հաղորդակցությունը: Այդ դեպքերում մեծածավալ համատեղ գործողությունների անհրաժեշտություն է առաջանում: Հարկային ստուգումների իրականացման մասով կան դեպքեր, երբ նաև կրկնվում են որոշ գործառնություններ:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>5.4.1 Հարկային մարմնի հետաքննության և քննչական գործառնությունները հստակ են կիրառվում և հիմնված են փոխգործունեությունը ապահովող արդյունավետ ընթացակարգի վրա</p>	<p>Մինչև 2008թ. տարեվերջ հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական, հետաքննության և քննչական գործառնությունները օպտիմալ սահմանված են և ներդրված է հաշվետվողականության մեխանիզմը:</p> <p>Իրականացված են «Օպերատիվ հետախուզության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող բոլոր միջոցառումները: Դա նշանակում է, որ հարկային մարմինը լիովին օգտագործում է օրենքով տրված բոլոր հատուկ լիազորությունները՝ մանրամասն սահմանված ընթացակարգերի հիման վրա:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայություն:</i></p>

Ենթադրություններ. Ապահովված է արդյունավետ կապն այլ իրավապահ մարմինների հետ, և գործում է տեղեկությունների փոխանակման գործուն համակարգ:

Ռիսկեր. Իրավապահ մարմինների միջև օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող ընթացակարգերը միասնականացված չեն:

Քաղաքականություն 5.5. *Կանխամտածված (չարամտորեն) հարկային օրենսդրությունը խախտողների նկատմամբ պատասխանատվության միջոցների խստացում: Միաժամանակ, նորմատիվորեն պետք է սահմանվի դրա տարբերությունը՝ օրենքի շրջանակներում թույլատրելի հարկային պլանավորումից:*

Քրեական օրենսգրքով հարկային իրավախախտումների համար նախատեսված հանցակազմի ապացուցելիությունը ներկայումս բարդ է: Հաճախ շփոթումնք է առաջանում հարկ վճարողի կիրառած մոտեցումը, գործարքի ձևակերպումը որպես «իրավախախտում» կամ «թույլատրելի հարկային պլանավորում» որակելու միջև: Անհրաժեշտ կլինի «գույքագրել» տարբեր տեսակի պատասխանատվության նորմերի կիրառման ձևերը, չափերը և պրակտիկան, ապա անդրադառնալ դրանց անհրաժեշտ վերանայմանը՝ նոր վարչարարական մոտեցումների ներքո:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
5.5.1 Գործում է կանխամտածված և չարամտորեն հարկային օրենսդրությունը խախտողների նկատմամբ պատասխանատվության միջոցները խստացնող փոփոխված օրենսդրություն	Մինչև 2009թ. տարեվերջ համապատասխան օրենսդրական փոփոխությունների ընդունում: <i>Տվյալների աղբյուրը՝ համապատասխան իրավական ակտեր</i>

Ենթադրություններ.

Հարկային հանցագործությունների հայտնաբերման գործում էական աջակցություն է ցուցաբերվում իրավապահ այլ մարմինների կողմից:

Այլ պետական մարմինների հետ օրենսդրական նախագծերի քննարկումը, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից դրա ընդունումը կիրականացվի նախատեսված ընթացակարգով և սահուն:

Ռիսկեր. Գործնականում բարդ է տարանջատել կանխամտածված հարկային իրավախախտումները թույլատրելի հարկային պլանավորումից:

ՆՊԱՏԱԿ 6. ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Կառուցվածքային բարեփոխումները կիրականացվեն՝

ա) հարկային ծառայության գլխավոր գրասենյակում կներդրվի գործառույթների վրա հիմնված կառուցվածք, որը հնարավորություն կտա կառավարման խողովակներում ունենալ հստակություն ու խուսափելու կրկնություններից,

բ) կվերակառուցվեն խոշոր հարկ վճարողների և ոլորտային տեսչությունները՝ ուժեղացնելով գործառույթային և ոլորտային հսկողությունը,

գ) կկրճատվի գործող հարկային տեսչությունների թիվը՝ բարելավելով դրանց կառուցվածքը, զարգացնելով հարկ վճարողների սպասարկման գործառույթները:

Կառուցվածքի էական առանձնահատկությունն է լինելու միասնական ընթացակարգերի ձևավորումը գլխավոր գրասենյակում, հստակ դելեգացումը տեղերին (հարկային տեսչություններին) և կատարման նկատմամբ ժամանակակից հսկողական գործիքների ներդրումը:

Կառուցվածքում նախատեսվում է ունենալ տվյալների մշակման մինչև 5 կենտրոն՝ տեղաբաշխված Երևանում և մարզերում: Դրանց հիմնական խնդիրն է լինելու հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվետվությունների ընդունումը և մշակումը՝ աշխատելով գլոբալ համակարգչային տվյալների բազայում:

Կառուցվածքում նախատեսվում է ունենալ հարկ վճարողների սպասարկման կենտրոններ: Դրանց հիմնական խնդիրն է լինելու հարկային օրենքների կիրառման վերաբերյալ պարզաբանումների տրամադրումը և իրազեկման իրականացումը: Քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու այն բանին, որ առաջին շրջանում, մինչև տեխնիկապես համալրված սպասարկման կենտրոնների գործարկումը, պարզաբանումները տրվեն հարկային ծառայության գլխավոր գրասենյակի կողմից, իսկ իրազեկման աշխատանքներն իրականացվեն հարկային տեսչությունների կողմից:

Կառուցվածքի հենասյուներից է լինելու մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծումը: Այն ենթադրելու է աշխատողների կատարողականության գնահատման համակարգի ներդրում:

Արդյունքում ունենալու ենք հարկային ծառայության նորացված կառավարման գործառնությունների վրա հիմնված հորիզոնական համակարգ: Այն կհամապատասխանի լավագույն միջազգային փորձին՝ ապահովելով հարկային ծառայության օպտիմալ կառավարում, գործառույթների հստակ տարանջատում, կրկնությունների բացառում՝ համապատասխան հաշվետվական համակարգերով:

Սույն նպատակին հասնելու օբյեկտիվ վերահսկվող կատարողականության ցուցանիշներն են.

- բարձր գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականության 75 տոկոսից ավելին ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է որպես կատարված
- բավարար գնահատական – եթե սույն նպատակից բխող քաղաքականության 50-74 տոկոսն ըստ իրենց կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է որպես կատարված
- անբավարար գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականությունն ըստ իր կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է մինչև 49 տոկոս միջակայքում:

Այս նպատակի ներքո իրականացվելու է հետևյալ քաղաքականությունը.

6.1. Անցում գործառույթների վրա հիմնված կառավարման սխեմայի: Վերափոխումն իրականացվելու է «գլխավոր գրասենյակ»-«խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն»-«տարածքային ստորաբաժանումներ» փուլերով

- 6.2. Տարածքային ստորաբաժանումների թվի կտրուկ փոքրացում՝ այն հավասարակշռելով տարածքային սպասարկման և տվյալների մշակման կենտրոններով, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ավելի ակտիվ ներգրավմամբ
- 6.3. Մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգի ներդրում
- 6.4. Աշխատողների և ստորաբաժանումների կատարողական չափանիշների համակարգի ներդրում՝ այն կապելով ոչ հատկապես միայն վճարված հարկերի, այլ արտադրողականության և այլ ֆունկցիոնալ ցուցանիշների հետ

Քաղաքականություն 6.1. *Անցում գործառույթների վրա հիմնված կառավարման սխեմայի: Վերափոխումն իրականացվելու է «գլխավոր գրասենյակ»-«խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն»-«տարածքային ստորաբաժանումներ» փուլերով*

Հարկային ծառայության ներկայումս գործող կազմակերպչական կառուցվածքը հնարավորություն չի տալիս արդյունավետ լուծել հարկային մարմնի առջև դրված որոշ խնդիրներ: Երևանում գործում են մասնագիտացված 4 հարկային տեսչություններ (այդ թվում՝ խոշոր հարկ վճարողներին սպասարկող), որոնք սպասարկում են ամբողջ հանրապետությունով տեղաբաշխված հարկ վճարողների: Դրանց գործառույթները ևս ենթակա են միասնականացման՝ ռեսուրսների արդյունավետ և արդարացված օգտագործման նպատակով: Տարածքային կառավարման առումով վերանայման կարիք ունեն նաև հարկային տեսչությունների տեղաբաշխվածության սխեման և առանձին գործառույթներ: Միաժամանակ, վերանայվելու է հարկային պլանավորման ներկայիս գործող կարգը և ենթադրվում է տարաջատում դնել ռազմավարական և օպերացիոն պլանավորման միջև:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
6.1.1 Հարկային ծառայությունում գործառույթների կրկնությունները հասցված է նվազագույնի	Մինչև 2008թ. տարեվերջ վերանայվել է բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները: <i>Տվյալների աղբյուրը՝ համապատասխան իրավական ակտեր</i>

Ենթադրություններ. Հարկային ծառայության նոր կազմակերպչական կառուցվածքը կունենա երկարաժամկետ գործողություն և էական փոփոխությունների չի ենթարկվի՝ չնայած որ ներկայումս իրականացվող կառավարման տեղաշարժը աննախադեպ մեծ է:

Ռիսկեր. Կառավարման փոփոխությունն ենթադրում է փոփոխման կառավարման ունակություն, վերջինս էլ ենթադրում է նոր կառավարիչների առկայությունը:

Քաղաքակառուցություն 6.2. *Տարածքային ստորաբաժանումների թվի կտրուկ փոքրացում՝ այն հավասարակշռելով տարածքային սպասարկման և տվյալների մշակման կենտրոններով, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ավելի ակտիվ ներգրավմամբ*

Նախկինում տարածքային հարկային տեսչությունների թիվը մեծացնելիս՝ հարկային ծառայությունը բավարար վերլուծական հմտություններ չի ունեցել այդ քայլի արդյունքները գնահատելու, կանխատեսելու, իսկ ապագայում՝ չափելու համար: Ներկայումս տարածքային հարկային տեսչությունների քանակը օպտիմալացման կարիք ունի, քանի որ հարկային ծառայությունը մշտապես առնչվում է ծախսերի օպտիմալացման հետ, իսկ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ գործիքները հնարավորություն են տալիս ծառայություններ մատուցելու և գործառնություններ իրականացնել տարածության վրա և ավելի արագ:

Ստորև ներկայացվում են քաղաքակառուցության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
6.2.1 Տարածքային հարկային տեսչությունների աշխատանքների արդյունավետության բարձրացում	<p>Հավաքագրման արժեքի (հարկային ծառայության կողմից վերահսկվող եկամուտների նկատմամբ ծախսերի տոկոս) նվազեցում սկսած 2011թ.:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ համապատասխան իրավական ակտեր</i></p>

Ենթադրություններ. ՀՀ կառավարությունը, այդ թվում՝ հարկային ծառայությունը, միջոցներ կձեռնարկեն աշխատանքից ազատվող աշխատողներիին վերապատրաստելու և նոր աշխատատեղեր գտնելու համար:

Ռիսկեր.

1. Նոր կազմակերպչական կառուցվածքն առաջացնելու է որոշակի դժգոհություններ դրա հետևանքով հարկային ծառայությունից ազատված աշխատողների մոտ:

2. Նոր, ավելի սեղմ թվով աշխատելիս որոշակի դիմադրություն և հոգեբանական բարդույթ է առաջանում: Դա կարող է բացասաբար ազդել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հավաքագրման ցուցանիշի կատարողականի վրա:

Քաղաքականություն 6.3. *Մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգի ներդրում*

Հարկային ծառայությունում ներկայումս բացակայում է մարդկային ռեսուրսների կառավարման համակարգված մոտեցումը: Ըստ 2008թ. հունվարին հրապարակված Եվրամիության չափորոշիչներով իրականացված հարկային վարչարարական կարողությունների գնահատման արդյունքների՝ այս ոլորտը գնահատվել է որպես առավել ցածր մակարդակ ունեցող:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև բերվում են անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
6.3.1 Հարկային ծառայությունում ներդրվել և գործում է մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգ:	Հարկային ծառայողների պաշտոնների հստակ նկարագրերի սահմանում՝ մինչև 2010 թ. հուլիսի 1-ը՝ պաշտոնների 60 տոկոսի համար, և մինչև 2010 թ. հոկտեմբերի 31-ը՝ բոլորի համար: <i>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայություն</i>

Ենթադրություններ. Հարկային ծառայության մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգն առավելագույնս համահունչ է պետական ծառայության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ որդեգրած մոտեցումներին:

Ռիսկեր. Համակարգի ներդրման սկզբնական շրջանում առաջանում են կոնֆլիկտներ «հին» ոճով աշխատող հարկային ծառայողների և նոր ընթացակարգերի միջև: Հարկային ծառայությունում արագորեն չեն գտնվելու անհրաժեշտ «դրոշակակիրներ»: Առավել «բարդ» զանգված է հանդիսանում միջին օղակի ղեկավարությունը:

Քաղաքականություն 6.4. *Աշխատողների և ստորաբաժանումների կատարողական չափանիշների համակարգի ներդրում՝ այն կապելով ոչ հատկապես միայն վճարված հարկերի, այլ արտադրողականության և այլ ֆունկցիոնալ ցուցանիշների հետ*

Հարկային ծառայության գործունեության ողջ 17 տարվա ընթացքում միայն մեկ փորձ է արվել ըստ աշխատանքային ցուցանիշների գնահատման համակարգ գործարկելու (2005-2006թթ., որը վերաբերվել է լավագույն հարկային տեսուչ և տեսչություն ընտրելուն), որը հետագայում չի շարունակվել և չի զարգացել:

Կատարողական չափանիշների համակարգի ներդրումը հանդիսանում է կառավարման նոր համակարգի հիմնական հենասյուներից մեկը:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>6.4.1 Կատարողական չափանիշների համակարգի ներդրման միջոցով հարկային մարմնի աշխատանքների արդյունավետությունը բարձրացված է: Հարկային ծառայողները ավելի շահագրգիռ են աշխատում և հստակորեն ձգտում են հասնել կոնկրետ արդյունքների, որից կախված էլ որոշվում է նրանց հատուցումների չափը և առաջխաղացումը:</p>	<p>Հարկային ծառայողների համար կատարողական չափանիշների և դրանց գծով հաշվետվական համակարգի սահմանում. մինչև 2010թ. հուլիսի 1-ը՝ պաշտոնների 60 տոկոսի համար և մինչև 2010թ. հոկտեմբերի 31-ը՝ բոլորի համար: <i>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայություն:</i></p>

Ենթադրություններ. Հարկային ծառայության մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգն առավելագույնս համահունչ է պետական ծառայության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ որդեգրած մոտեցումներին:

Ռիսկեր. համակարգն ենթադրում է հարկային ծառայողների հաշվետվությունների աճ: Ոչ բոլոր պաշտոնների համար է, որ հնարավոր է սահմանել քանակային կատարողական չափանիշներ՝ դրանք փոխարինելով ավելի բարդ որակական կամ ժամանակային չափանիշներով:

ՆՊԱՏԱԿ 7. ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հարկային վարչարարության տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարումը ենթադրում է նոր գործիքների ընդգրկում, աշխատանք միայն օրինական (լիցենզավորված) համակարգչային ծրագրերով, համակարգի ամբողջականության և անվտանգության ապահովում: Դա վերաբերելու է հատկապես հարկ վճարողների տվյալների գլոբալ համակարգչային բազայի կառավարմանը՝ ներառելով՝

ա) հարկ վճարողների մասին օրենքով սահմանված բոլոր տեղեկությունների ամբողջական (հիմնական) բազայի վարումը,

բ) համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման հարցերը,

գ) հարկ վճարողների մասին արտաքին և ներքին տեղեկատվության, հաշվետվությունների ընդունման և մշակման միասնական էլեկտրոնային համակարգ, գործերի ավտոմատ հսկողություն:

Համակարգը պետք է պատրաստ լինի նոր խնդիրների լուծման, մասնավորապես այլ գործակալությունների տվյալների բազաների հետ աշխատելու իմաստով:

Արդյունքում ունենալու ենք արդիականացված տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգ, որը համարված կլինի ժամանակակից ծրագրային ապահովմամբ: Այն մեծամասամբ կավտոմատացնի հարկային ծառայության խոշոր գործառնությունները՝ նվազագույնի հասցնելով մարդկային գործունի «ռիսկային» ազդեցությունը: Դրա գրավականը կհանդիսանա SS ոլորտի երկարաժամկետ ռազմավարական ծրագրի ստեղծումը:

Սույն նպատակին հասնելու կատարողականության ցուցանիշներն են.

- բարձր գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականության 75 տոկոսից ավելին ըստ իր կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է որպես կատարված,
- բավարար գնահատական – եթե սույն նպատակից բխող քաղաքականությունների 50-74 տոկոսն ըստ իր կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է որպես կատարված
- անբավարար գնահատական - եթե սույն նպատակից բխող քաղաքականությունն ըստ իր կատարողական ցուցանիշների չափվել ու գնահատվել է մինչև 49 տոկոս միջակայքում:

Այս նպատակով իրականացվելու է հետևյալ քաղաքականությունը.

- 7.1. SS-ի նոր ռազմավարության սահմանում, հարկային ծառայության նոր սահմանված առաքելության և հիմնական 7 նպատակների իրագործումն ապահովելու համար
- 7.2. Հարկ վճարողների մասին ամբողջականացված տվյալների ժամանակակից բազայի ստեղծում, ներառյալ երրորդ անձանցից օրենքով ստացվածը: Համակարգը պետք է ապահովի հարկ վճարողների անհատական տվյալների գաղտնիությունը
- 7.3. Առավելագույնի հասցնել ժամանակակից SS-ի համակարգերի կիրառումը հարկ վճարողների և հարկային ծառայության ներքին ստորաբաժանումների կողմից՝ ինտերնետ, ներքին ցանց, պորտալներ, ժամանակակից լիցենզավորված ծրագրային ու գործիքային մեթոդների գծով վերապատրաստումներ:

Քաղաքականություն 7.1. *SS-ի նոր ռազմավարության սահմանում, հարկային ծառայության նոր սահմանված առաքելության և հիմնական 7 նպատակների իրագործումն ապահովելու համար*

Հարկային ծառայության SS-ի գործող համակարգը մեծամասամբ կառուցված է ավանդական աշխատանքների հնարավորինս ավտոմատացման և ընթացիկ խնդիրների լուծման վրա: Մա հիմնականում պայմանավորված է այս ոլորտում երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի և որպես հետևանք ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների բացակայությամբ:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
7.1.1 Հարկային ծառայությունում առկա է ժամանակակից պահանջների համապատասխան SS-ի երկարաժամկետ, թարմացվող ռազմավարություն	Որակական գնահատում ըստ միջազգային լավագույն փորձին ծանոթ մասնագիտական խմբի կարծիքի: <i>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայության կատարած հարցումներ</i>

Ենթադրություններ. Հարկային ծառայության SS-ի ռազմավարությունը ամբողջովին համապատասխանում է հանրապետությունում ոլորտի պատասխանատուների կողմից մշակված հայեցակարգային փաստաթղթերին, որոնք նախապես առկա են:

Ռիսկեր.

1. Սահմանված նոր SS-ի ռազմավարությունում ամբողջությամբ արտացոլված չեն բոլոր հնարավոր միջոցները, որոնք անհրաժեշտ են հարկային ծառայության նոր առաքելության և հիմնական 7 նպատակների իրականացման համար,

2. Հարկային ծառայությունը չունի բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ՝ նոր SS-ի ռազմավարությունը ամբողջությամբ իրականացնելու համար:

Քաղաքականություն 7.2. *Հարկ վճարողների մասին ամբողջականացված տվյալների ժամանակակից բազայի ստեղծում, ներառյալ երրորդ անձանցից օրենքով ստացվածը: Համակարգը պետք է ապահովի հարկ վճարողների անհատական տվյալների գաղտնիությունը*

Հարկային ծառայության տեղեկատվական բազան համարվում է հանրապետությունում ամենահագեցվածներից մեկը և ունի իր ուրույն դերակատարությունը հարկային վարչարարության մեջ: Սակայն դրանում պարունակվող տվյալների կազմի իմաստով այն վերջին տարիներին գրեթե չի ենթարկվել փոփոխությունների: Դրա հետ մեկտեղ ներկայիս իրականությունը ներկայացնում է ավելի մեծ ու նոր պահանջներ տվյալների բազաների նկատմամբ: Այլ մարմինների հետ համագործակցության շրջանակներում հաճախ կարիք է լինում ապահովել նրանց ծրագրերի իրականացումը հարկային ծառայության տեղեկատվական բազայի միջոցով: Շարունակվում է արդիական մնալ հարկ վճարողների անհատական տվյալների գաղտնիության և անվտանգության էլ ավելի բարձր մակարդակի ապահովումը՝ նախատեսելով այդ տվյալների տրամադրումը միայն օրենքով սահմանված դեպքերում:

Ստորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը.

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>7.2.1 Ստեղծված է ժամանակակից ծրագրերով հագեցված տվյալների բազա, որը համապատասխանում է հարկային ծառայության SS-ի ռազմավարության ստանդարտներին</p>	<p>Հարկային ծառայության տվյալների բազայի ներքին օգտագործողների կողմից բավարարվածության աստիճանի մեծացում:</p> <p>Հարկային ծառայության տվյալների բազայի արտաքին օգտագործողների կողմից բավարարվածության աստիճանի մեծացում՝</p> <p>ՀՀ ֆինանսների, էկոնոմիկայի նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, միջազգային կազմակերպությունների զեկույցներ:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայության կատարած հարցումներ</i></p>

Ենթադրություններ. Առկա է բոլոր շահագրգիռ կառույցների հետ արդյունավետ համագործակցություն ՏԷԼԵԿՍԵՐՎԻՍԻՆ հասարակություն» գաղափարի շրջանակներում:

Ռիսկեր. Հարկային ծառայության հետ համագործակցող տարբեր կառույցների տեղեկատվական բազաների միջև կան էական տարբերություններ համատեղելիության տեսանկյունից:

Քաղաքականություն 7.3. Առավելագույնի հասցնել ժամանակակից SS-ի համակարգերի կիրառումը հարկ վճարողների և հարկային ծառայության ներքին ստորաբաժանումների կողմից՝ ինտերնետ, ներքին ցանց, պորտալներ, ժամանակակից լիցենզավորված ծրագրային ու գործիքային մեթոդների գծով վերապատրաստումներ

Ներկայումս հարկային ծառայությունը լիարժեք չի օգտագործում իր SS-ի համակարգերի կարողությունները: Դա պայմանավորված է և SS-ի համակարգերի որոշ չափով ոչ արդիական լինելով, ինչպես նաև գործող համակարգը չի խթանել և առավելագույնի հասցրել SS-ի գործիքախմբի օգտագործումը:

Մտորև ներկայացվում են քաղաքականության իրականացման արդյունքները, կատարողականության ցուցանիշները, ինչպես նաև անհրաժեշտ ենթադրությունները և հնարավոր ռիսկերը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>7.3.1 Ժամանակակից SS-ի գործիքները և մեթոդները լայնորեն կիրառվում են հարկային ծառայության պրակտիկայում</p>	<p>Ինտերնետի միջոցով հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների ծավալի մեծացում՝ ըստ միջազգայնորեն ընդունված պարամետրերի:</p> <p>Ներիքն ցանցի օգտագործողների թվի և թողունակության մեծացում հարկային ծառայության ստորաբաժանումների համար:</p> <p>Լիցենզավորված համակարգչային ծրագրերի տեսակար կշռի աճ հարկային ծառայության գործունեության մեջ:</p> <p>Հարկային օրենսդրության և այլ տեղեկատվության տարածման ծավալների և արագործության մեծացում՝ պորտալների և տերմինալների կիրառման միջոցով:</p> <p>Նշված գործիքների և մեթոդների գծով հարկային ծառայողներին տրամադրվող ձեռնարկների և ուսուցումների թվի աճ: <i>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայություն</i></p>

Ենթադրություններ. Հարկային ծառայությունն ունենալու է բավարար որակավորման և փորձառության մարդկային ռեսուրսներ և համապատասխան ֆինանսավորում:

Ռիսկեր. Կադրերի մեծ հոսունություն և ուսումնական ու վերապատրաստման ծրագրերի անհամապատասխանություն (կամ համապատասխանեցման կարողությունների պակաս) արագորեն փոփոխվող, թարմացվող տեխնոլոգիաների, ծրագրային ապահովման և սարքերի հետ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՆՊԱՏԱԿ 1»-Ի ԳԾՈՎ

- **Նպատակը.** Խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք և ժամանակին հարկման ապահովում
- **Քաղաքականությունը.**

1.1 Պետական եկամուտների մեջ հիմնական դերակատարում ունեցող հարկ վճարողների հարկման բազաների նկատմամբ հասցեկան մոտեցում

1.2 Պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելը կանխարգելող օրենսդրական և վարչարարական մեխանիզմի ներդրում

1.3 Նոր քաղաքականության մշակում՝ հարկ չվճարող կազմակերպությունների անունների բացահայտման գծով

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվ, ամիս, տարեթիվ)
1.	Խոշոր հարկ վճարողների ընտրության չափանիշների սահմանում և դրանց հիման վրա հարկ վճարողների գործերի փոխանցում խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն	01.06.08-31.07.08
2.	Ներկայումս գործող թվով 4 ոլորտային հարկային տեսչությունների միավորումը խոշոր հարկ վճարողների մեկ համախմբված հարկային տեսչության մեջ	01.07.08-31.12.08
3.	Խոշոր ապառքատերերի հետ կատարվող աշխատանքների նոր մեխանիզմների մշակում	01.10.08-31.03.09
4.	Ուսումնասիրությունների հիման վրա օրենսդրական փոփոխությունների նախագծի պատրաստում այն մասին, որ պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից օրենսդրության խախտմամբ գործարարությամբ զբաղվելու դեպքերում օրենքով սահմանվեն կոնկրետ հասցեական պատասխանատվության խիստ նորմեր և ներկայացում ՀՀ կառավարություն	01.11.08-31.03.09
5.	Պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելու դեպքերի բացահայտման նպատակով պետական մարմինների հետ համագործակցության ծրագրի մշակում	01.04.09-30.06.09
6.	Պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելու դեպքերի բացահայտման նպատակով գույքի և եկամուտների հայտարարագրերի միջոցով արդյունավետ հսկողության մեխանիզմների սահմանում՝ նախատեսելով հայտարարատու ֆիզիկական անձանց մոտ հսկողության կազմակերպելու և անցկացնելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	01.07.08-01.03.09
7.	Ուսումնասիրությունների հիման վրա ՀՀ կառավարություն օրենսդրական առաջարկություն ներկայացնելը՝ հարկ չվճարող կազմակերպությունների անունների բացահայտման ընթացակարգերի և արդյունքների հրապարակման իրավական հիմքերի ստեղծման նպատակով	01.07.08-28.02.09
8.	Ուսումնասիրությունների հիման վրա ՀՀ կառավարություն խոշոր կազմակերպություն-հարկ վճարողների մոտ միջազգային չափանիշներին համապատասխան պարտադիր աուդիտի անցկացման վերաբերյալ օրենսդրական առաջարկություն ներկայացնելը՝ ապահովելով նաև արդյունքների հասանելիությունը հարկային ծառայությանը	01.07.08-30.11.08

* միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և/կամ մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով հասկացվում է ինչպես ՀՀ պետական բյուջեն, այնպես էլ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՆՊԱՏԱԿ 2»-Ի ԳԾՈՎ**

- **Նպատակը.** Փոքր բիզնեսի համար արդյունավետ հարկային բեռի սահմանում՝ «փափուկ» հարկային վարչարարության կիրառմամբ
- **Քաղաքականությունը.**
 - 2.1 Փոքր բիզնեսի համար հարկային հաշվետվությունների ու այլ պահանջվող տվյալների քանակության և պարբերականության կրճատում
 - 2.2 Փաստաթղթաշրջանառությունը փոքր բիզնեսի համար չպետք է ծանր խնդիր լինի, սակայն գրանցումների ծավալները պետք է էականորեն կարգավորվեն
 - 2.3 Հարկային ծառայությունը ներդնելու է նորաստեղծ փոքր բիզնեսին աջակցելու առանձին ծրագիր
 - 2.4 Փոքր ձեռնարկություններում ստուգումների պարբերականության կրճատում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
	<i>Միջոցառման անվանումը</i>	<i>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը, ամսաթիվ, ամիս, տարեթիվ)</i>
9.	Հարկային ծառայության կողմից հաշվետվությունների և այլ տվյալների տեսակների, ձևաթղթերի գույքագրման և օպտիմալացման առաջարկությունների քննարկման ժամանակ առանձին անդրադառնալ փոքր ու միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) առանձնահատկություններին՝ նրանց համար սահմանելով ավելի ցածր վարչարարական բեռ (տես սույն փաստաթղթի Նպատակ 4-ի գործողությունների ժամանակացույցի 58-րդ կետը)	01.08.08-31.10.08*
10.	Փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների (ՓՄՁ) դասակարգման նոր համակարգի մշակում ու ներդրում հարկային օրենսդրության կիրառման նպատակով	01.07.08-31.07.08
11.	Կազմակերպությունների ստեղծման և սպասարկման ոլորտում «մեկ պատուհանի» գաղափարի ներդրման քննարկումների կազմակերպում միջգերատեսչական հարթության վրա	01.07.08-31.05.09
12.	Հաշվետվությունների քանակի և ներկայացման պարբերականության կրճատում, հարկերի հաշվարկման պարզեցում՝ հենվելով կայուն ֆիքսված միատարր հարկային բազայի և հարկատեսակների վրա (օրենսդրական փոփոխությունների առաջարկ)	01.07.08-31.07.08
13.	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից հաշվապահական ծառայությունների մատուցման գործընթացը ՓՄՁ համար կազմակերպելու օպտիմալացման քննարկումներին մասնակցություն, ներառյալ հաշվապահական ստանդարտների առանձին փաթեթի մշակման հարցը	01.06.08-28.02.09
14.	Փոքր բիզնեսի ներկայացուցիչների համար հարկային հաշվառման առանձնահատուկ եղանակների, ինչպես նաև ստուգումների (օրինակ՝ 314 և 315 գրքերի վարումը, դրամարկղային գրքերի վարումը և այլն) կիրառման շրջանակների էական նվազեցում: Այդ նպատակով իրականացվելու են՝ <ul style="list-style-type: none"> - համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախապատրաստում և ներկայացում - միջգերատեսչական հարթությունում քննարկումների անցկացում՝ ստուգումների հնարավոր կոնսուլիդացման նպատակով - ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի համակարգչային ծրագրի չափանիշների և կշիռների սահմանման ժամանակ հաշվի առնել ՓՄՁ-ի կարգավիճակ ունենալը 	01.06.08-31.12.08
15.	Փոքր բիզնեսի ներկայացուցիչների համար պարզեցված հաշվառման և հարկերի հաշվարկման ձեռնարկի (ինֆորմացիոն թերթիկի) մշակում	01.10.08-30.06.10*
16.	ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի հետ միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում (սեմինարներ, կլոր սեղաններ և այլ)՝ այդ թվում նորաստեղծ փոքր բիզնեսի համար	01.07.08-31.12.11

* միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և/կամ մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով հասկացվում է ինչպես ՀՀ պետական բյուջեն, այնպես էլ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՆՊԱՏԱԿ 3»-ի գծով**

- **Նպատակը.** Հարկային մարմնում կոռուպցիայի հաղթահարում
- **Քաղաքականությունները.**
 - 3.1 Հարկային ծառայողների աշխատավարձերի և այլ հատուցումների բարձրացում, արդյունավետ խրախուսման համակարգի ձևավորում
 - 3.2 Հարկային ծառայողների առաջխաղացման գործուն համակարգի ներդրում, որպես բաղադրիչ դիտարկելով նաև մասնագիտական վերապատրաստումը
 - 3.3 Հարկային ծառայողների ատեստավորման օբյեկտիվ մեխանիզմի ներդրում
 - 3.4 Հարկային մարմնում «ներքին աուդիտի» գործառույթի ըստ էության ներդրում
 - 3.5 Հարկ վճարողների նկատմամբ հարկային վարչարարական ընթացակարգերի միատեսակ կիրառման ապահովում
 - 3.6 Հարկային ծառայության նկատմամբ բողոքարկման համակարգի էական վերակառուցում՝ հաշվետվականություն, արդյունավետություն ապահովելու համար: Նոր աստիճանի «թեժ գծի» գործարկում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
	<i>Միջոցառման անվանումը</i>	<i>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվ, ամիս, տարեթիվ)</i>
17.	<i>(17-րդ կետն ուժը կորցրել է 17.02.11թ. N129-Ն)</i>	
18.	Համապատասխան նորմատիվային ակտերի նախապատրաստում և ներկայացում հարկային ծառայության զարգացման ֆոնդի ձևավորման և ծախսային կառուցվածքի հիմնովին վերանայման (այն ավելի «արդյունքների նուրբ» դարձնելու) նպատակով	01.07.08-28.02.09
19.	Հարկային ծառայության ուսումնական կենտրոնի ստեղծման նպատակով օրենսդրական փոփոխությունների նախապատրաստում ու ներկայացում և համապատասխան ուսումնական ծրագրերի կազմում: Այն պետք է ներառի նաև հարկային ծառայողների մասնագիտական կարողությունների անընդմեջ բարձրացման նպատակով պարտադիր վերապատրաստման ընթացակարգի սահմանումը	01.07.08-31.12.08
20.	Հարկային ծառայողների համար մրցույթի և ատեստավորման կարգի վերանայման նպատակով օրենսդրական փոփոխությունների նախապատրաստում և ներկայացում (հաշվի առնելով նաև օպերատիվ հետախուզության առանձնահատկությունները)	01.07.08-31.07.08
21.	20-րդ կետում նշված օրենսդրության առկայության պայմաններում հարկային ծառայության մրցութային և ատեստավորման միջգերատեսչական հանձնաժողովի նոր կանոնակարգի ստեղծում (հաշվի առնելով նաև օպերատիվ հետախուզության առանձնահատկությունները)	01.07.08-30.09.08
22.	Հարկային ծառայությունում «ներքին աուդիտի» առանձնացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում և գործառույթների հաստատում:	01.07.08-31.08.08
23.	«Ներքին աուդիտի» արդյունքները (հարկային ծառայողի կողմից կատարված խարդախության կամ լուրջ խախտման) հանրությանը պարբերաբար ներկայացնելու ընթացակարգի սահմանում	01.07.08-31.10.08
24.	Հարկային ծառայության գործողությունների նկատմամբ բողոքարկման ընթացակարգերի բարելավում՝ վերանայելով գանգատարկման հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջադրման կարգը և հանձնաժողովի աշխատակարգը	01.06.08-30.06.08
25.	Հարկ վճարողներին անհրաժեշտ կոնկրետ խնդիրների լուծմանն աջակցելու և	01.10.08-31.12.08*

	օպերատիվ կերպով արձագանքելու նպատակով հարկային ծառայությունում «թեժ գծի» գործարկման համար համապատասխան ընթացակարգերի սահմանում՝ միաժամանակ նախատեսելով ստացված տեղեկատվության օգտագործման մեխանիզմներ	
26.	Հաշվետվությունները հարկային մարմիններին փոստով կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու լայնածավալ քարոզչություն	01.10.08-31.12.11
27.	Հարկ վճարողներից հաշվետվությունների ընդունման և փաստաթղթերի տրամադրման գործառնության համար «մեկ պատուհանի» գործարկում: Դա ենթադրում է հաշվետվություններ ընդունող հանձնաժողովների լուծարում և հարկ վճարողների հետ անմիջական շփումների էական կրճատում	01.07.08-31.08.08
28.	Հարկային օրենսդրության դրույթների մեջ երկիմաստությունների և տարբերությունների «գույքագրում»: Արդյունում՝ երկիմաստությունների և տարբերությունների վերաբերյալ մուտքագրված տվյալների դասակարգված առանձին բազայի ստեղծում: «Գույքագրումը» ներառելու է նաև արտաքին հարցում: Աշխատանքը կատարվելու է 2 փուլով՝ ա/ հարկային վարչարարական դրույթներ (որն անմիջապես օգտագործվելու է ՀՀ ԱԺ հարկային օրենսգրքի ընդհանուր մասին քննարկումներին մասնակցելու նկատառումներով) բ/ հարկերի հաշվարկմանը վերաբերվող դրույթներ (որոնք օգտագործվելու են բացերը ծածկելու և հարկային քաղաքականության առաջարկություններ ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացնելու համար)	01.10.08-31.01.09
29.	Հարկային օրենսդրության երկիմաստությունների և տարբերությունների «գույքագրման» արդյունքում օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում օրենսդրական բացերը վերացնելու համար	01.02.09-30.06.09*
30.	(30-րդ կետն ուժը կորցրել է 17.02.11թ. N129-Ն)	

* միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և/կամ մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով հասկացվում է ինչպես ՀՀ պետական բյուջեն, այնպես էլ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՆՊԱՏԱԿ 4»-ի գծով**

- **Նպատակը.** Հարկային պարտավորությունների կամավոր վճարման (ինքնագնահատման) սկզբունքի ամբողջական ներդրում
- **Քաղաքականությունները.**
 - 4.1 *Անցում հաշվետվությունները հարկային մարմիններին փոստով կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելուն.*
 - 4.2 *Հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի ներդրում՝ ներառելով նաև հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ իրականացումը*
 - 4.3 *Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծում*
 - 4.4 *Հարկային ծառայությունը է՝ականորեն բարելավելու է հարկ վճարողներին հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմը*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
	<i>Միջոցառման անվանումը</i>	<i>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվ, ամիս, տարեթիվ)</i>
31.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացման ուղեցույցի կիրառման օժանդակություն	01.01.09-30.03.10*
32.	Հարկ վճարողների սպասարկման ամբողջական ռազմավարության սահմանում	01.01.09-28.02.09
33.	Հարկ վճարողների թվով 5 սպասարկման կենտրոնների գործարկում	01.07.09-31.12.10*
34.	Ամբողջական համակարգի ապահովում՝ հաշվետվությունները հարկային ծառայություն էլեկտրոնային եղանակով կամ սովորական փոստով ներկայացնելու համար	01.07.08-31.12.11
35.	Հարկ վճարողների հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման նպատակով օրենսդրական փոփոխության նախագծի ՀՀ կառավարություն ներկայացնելը	01.12.08-31.01.09
36.	Հարկ վճարողներին պարզաբանումների տրամադրման ընթացակարգի սահմանում	01.02.09- 31.05.10
37.	Սոցիալական գործընկերության շրջանակներում հարկային ծառայության պետին կից խորհրդի ստեղծում՝ ընդգրկելով պետական կառույցների, գործատուների միության, արհեստավարժ և գործարար միությունների, միջազգային կառույցների և միջազգային ծրագրերի ներկայացուցիչներին	01.07.08-31.09.08
38.	Ընթացակարգի սահմանում՝ հարկային ծառայության կողմից մշակված օրենսդրական և ընթացակարգային համապատասխան նախագծերը հասարակական քննարկումների պարտադիր ներկայացնելու համար: Նախատեսվում է այդ քննարկումները իրականացնել մինչև այլ գերատեսչություններին նախագծերը ներկայացնելը	01.07.08-31.12.08
39.	Առանձին ֆորում ստեղծելու նպատակահարմարության հարցի քննարկում (այդ թվում՝ պրոֆեսիոնալ հանրության հետ), որը բաղկացած է լինելու միջազգային կամ բարձր վարկանիշ ունեցող առողիտորական և հաշվապահական խորհրդատվական ընկերություններից, որին հարկային ծառայությունը յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ կներկայացնի առավել խնդրահարույց հարցերը	01.02.09-30.04.09
40.	Պարտադիր պարբերական մամուլի հաղորդագրությունների տարածման, ասուլիսների կազմակերպման սովորույթի ներդրման նպատակով կանոնակարգի մշակում	01.11.08-31.12.08
41.	Հարկային վիճակագրական ամսական տեղեկատուի հրատարակում (նաև հարկային ծառայության ինտերնետային կայքում): Ներկայացվող ցուցանիշների փաթեթը ձևավորվելու է նաև հասարակական պահանջի	01.10.08-31.12.11

	հիման վրա (առկա է ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի հարկային կատարելագործման ծրագրի փորձը)	
42.	«Հարկային ժամ» մշտական հեռուստատեսային և ռադիոհաղորդումների հեռարձակում: Այս հարցի կապակցությամբ հարկային ծառայությունը համագործակցելու է նաև արհեստավարժ հասարակական կազմակերպությունների և միությունների հետ	01.10.08-31.12.08*
43.	Էլեկտրոնային մեդիահոլովակների (CD-ներ) պատրաստում՝ հարկային օրենսդրության մատչելի մատուցման նպատակով, ինչը կներառի պատկերավոր օրինակներ՝ հարկ վճարողների առանձին խմբերի համար	01.10.08-31.12.11
44.	Նոր ստեղծված հարկ վճարողներին՝ օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգի մշակում: Այդ այցելությունները կարող են պատվիրվել ՀՎՀՀ ստանալու ժամանակ կամ հետագայում առաջին 6 ամսվա ընթացքում	01.04.09-30.04.09
45.	Հարկային ծառայության ինտերնետային կայքում հարկային հաշվետվությունների (հաշվարկների) դատարկ ձևաթղթերի տեղադրում՝ ապահովելով դրանց խմբագրման և տպագրման հնարավորությունները	01.10.08-31.03.09
46.	Հարկային ծառայության տարածքային ստորաբաժանումներում համակարգչային տերմինալների տեղադրում ըստ փուլերի՝ էլեկտրոնային եղանակներով հաշվետվությունների հանձնման հնարավորության ստեղծման նպատակով	01.04.09-31.12.10
47.	Հարկային օրենսդրության վերաբերյալ հաճախ հանդիպող հարցերի համախմբման և օգտագործման տվյալների բազայի («գիտելիքների շտեմարանի») հայեցակարգի («ճարտարապետության») մշակում: Այն տեխնիկական առաջադրանք է՝ բուն շտեմարանը կառուցելու համար	01.10.08-30.04.09*
48.	Հարկային պրակտիկայում հաճախ հանդիպող հարցերի և դրանց պատասխանների տվյալների բազայի («գիտելիքների շտեմարանի») ստեղծում՝ արագագործ փնտրման համակարգով: Այն օգնելու է միատեսակ պատասխաններ ապահովելուն: Առավել հաճախ հնչող հարցերը տեղաբաշխվելու են հարկային ծառայության ինտերնետային կայքում՝ տասնօրյակային թարմացմամբ	01.05.09-30.11.09*
49.	Հարկային հաշվետվությունների և տեղեկությունների, ինչպես նաև հարկային հաշիվ-ապրանքագրերի ու այլ տեսակի սկզբնական փաստաթղթերի տեսակների, ձևաթղթերի «գույքագրում» և դրանց օպտիմալացման առաջարկությունների մշակում: Դա վերաբերելու է ինչպես դրանց քանակի, պարբերության, յուրաքանչյուրում պարունակվող տեղեկատվության ծավալի, շարադրանքի հստակ լեզվի, տեխնիկապես մշակման համար հարմարավետության, դիզայնի հարցերին: «Գույքագրումը» ներառելու է նաև արտաքին հարցում	01.10.08-28.02.09*
50.	Հարկային աշխատակիցների (ինչպես նաև հարկ վճարողների) իրազեկվածության աստիճանի բարձրացման և հարկատուների սխալների կանխարգելման նպատակներով առավել հաճախ թույլ տրվող սխալների տեղեկատուի ստեղծում՝ ամսեկան թարմացմամբ	01.05.09-30.12.10
51.	(51-րդ կետն ուժը կորցրել է 17.02.11թ. N129-Ն)	
52.	Հարկային օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների ամենամսյա համառոտագրի (դայջեստի) հրատարակում հարկային ծառայության ինտերնետային կայքում՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 7-ը	01.08.08-31.12.11

* միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և/կամ մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով հասկացվում է ինչպես ՀՀ պետական բյուջեն, այնպես էլ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՆՊԱՏԱԿ 5»-ի գծով**

- **Նպատակը.** Հարկային ստուգումների նոր քաղաքականություն
- **Քաղաքականությունները.**
 - 5.1 Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում
 - 5.2 Կամերալ ուսումնասիրությունների ինստիտուտի վերակառուցում՝ հիմնված տվյալների մշակման ավտոմատ համակարգի և տվյալների ժամանակակից բազայի վրա
 - 5.3 Հարկային գերավճարների, ներառյալ ԱԱՀ-ի գծով, վերադարձման ավտոմատացված համակարգի ներդրում, ինչպես նաև հարկային ապառքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում
 - 5.4 Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական, հետաքննության և քննչական գործառույթների նպատակայնության մեծացում, հարկային ծառայության այլ գործառույթների հետ փոխգործության օպտիմալ սխեմայի որոշում
 - 5.5 Կանխամտածված (չարամտորեն) հարկային օրենսդրությունը խախտողների նկատմամբ պատասխանատվության միջոցների խստացում: Միաժամանակ, նորմատիվորեն պետք է սահմանվի դրա տարբերությունը օրենքի շրջանակներում թույլատրելի հարկային պլանավորումից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
	<i>Միջոցառման անվանումը</i>	<i>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)</i>
53.	Հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության նորմերի կիրառման պրակտիկայի ու արդյունավետության ուսումնասիրում: Դրա արդյունքում հարկային օրենքը բազմակի և չարամտորեն խախտելու դեպքում անհրաժեշտությունից էլնելով պատասխանատվության միջոցների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	01.07.08-30.12.10
54.	Օրենսդրական փոփոխությունների նախագծերի նախապատրաստում և դրանք ներկայացնելը վարչարարական մեխանիզմներով բացառելու և կանխելու համար առանց փաստաթղթի կամ մասնակի փաստաթղթավորմամբ ապրանքաշրջանառությունը, անապրանք գործարքների իրականացումը, հարկային հաշիվներ դուրս չգրելու կամ չստանալու դեպքերը և «սև» հաշվապահության վարումը՝ անդրադառնալով նաև՝ <ul style="list-style-type: none"> - կանխիկով գործառնությունների սահմանափակումների հարցերին - մեծածախ և մանրածախ առևտրի կանոնների մեջ որոշակի փոփոխությունների կատարման նպատակահարմարության հարցին, ըստ որի վաճառքը որոշակի քանակություններից հետո (անկախ գնորդի ֆիզիկական անձ լինելու հանգամանքից) կդիտվի որպես մեծածախ առևտուր՝ վճարահաշվարկային փաստաթղթի պարտադիր ձևակերպմամբ <ul style="list-style-type: none"> - ԱԱՀ-ի հաշվարկման և վերահսկման գործընթացների հեշտացման համար՝ ԱԱՀ-ի հատուկ համարակալված, վաճառքի ենթակա կարբոնացված ձևաթղթերի թողարկման ու կիրառության նպատակահարմարության հարցին - հարկ վճարողների կողմից համատեղ գործունեության հարկման հարցին 	01.06.08-31.12.08
55.	Հարկային հանցագործությունների կանխման և կանխարգելման, հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական, հետաքննության և քննչական գործառույթների նպատակայնության մեծացման, հարկային ծառայության այլ գործառույթների հետ փոխգործության օպտիմալացման նպատակով ներքին կանոնակարգի հաստատում: Նպատակը համատեղ ծրագրերի արդյունավետության բարձրացումն է՝ տեխնիկական և մասնագիտական հաղորդակցության կանոնակարգման միջոցով	01.09.08-31.03.09

56.	Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի (ՌԶՄՀ) պիլոտային ձևով կիրառվող ուսումնասիրություն, շտկում, համակարգի ամբողջական գործարկում, համապատասխան իրավական հիմքերի և ընթացակարգի սահմանում:	01.07.08-30.06.10*
57.	Հարկային գերավճարների, ներառյալ ԱԱՀ-ի գծով, հետ վերադարձման դյուրացված (ավտոմատացված) համակարգի մշակում, պիլոտային ռեժիմով գործարկում, համակարգի շտկում և համապատասխան ընթացակարգերի սահմանում: Գործարկումից մեկ տարի հետո պարտադիր երկրորդ ուսումնասիրության անցկացում և ճշգրտում	01.07.08-30.06.10
58.	Երրորդ անձանց կողմից տեղեկություններ ներկայացնելու կարգը հաստատելու մասին օրենքի նախագծի ներկայացում, որն ենթադրում է նաև վարչական ռեգիստրների (սեփականության իրավունքի, ձեռնարկատիրական գործունեության իրավունքի, քաղաքացիական կացության, մաքսային, սոցիալական և այլ ռեգիստրներ) և «քվազիֆիսկալ» ոլորտի ռեգիստրների (էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայություններ) տեղեկությունները կայուն պարբերականության հիմքով ստացում և օգտագործում	01.08.08-30.11.08
59.	Կուտակված հարկային ապառքների նվազմանը, ինչպես նաև նոր առաջացող հարկային ապառքների բացառմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում	01.10.08-01.03.09
60.	ՀԴՄ-ի շահագործման հետ կապված հասարակության վերահսկողության մեխանիզմի մշակում` ներառյալ առաջարկելով քաղաքացիների անձնական շահագրգռվածության գործոնը (որպես օրինակ, կարող է ներդրվել «վիճակախաղի» գաղափարը)	01.10.08-30.06.09
61.	Հարկային ստուգումների կազմակերպման գործընթացի միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում և դրա հիման վրա առաջարկությունների մշակում	01.11.08-31.12.11
62.	ՀԴՄ-ների սպասարկման կենտրոնների մասնագետների հետ համատեղ “ՀԴՄ-ներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշման դրույթների հստակեցում և համապատասխան օրենսդրական փոփոխությունների պատրաստում: Նպատակը ժամանակակից սարքերի կիրառումը թույլ տալու և միաժամանակ հարկային հսկողությունը ապահովելն է	01.07.08-28.02.09*
63.	Հարկային ստուգումների արդյունքների գնահատման կանոնակարգի մշակում	01.01.09-30.12.10
64.	Միջգերատեսչական հարթության մակարդակով քննարկել և առաջարկել ակցիզային դրոշմանիշերին նմանատիպ դրոշմանիշերի կիրառման նպատակահարմարությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված ապրանքների նկատմամբ (Բելառուսիայի, Մոլդովայի և Ղազախստանի փորձը)	01.01.09-31.03.09
65.	Կենտրոնացված կարգով հարկ վճարող (բիզնես խմբի մեջ մտնող «դուստր») (աֆիլացված) կազմակերպությունների) ինստիտուտի կիրարկման նպատակահարմարության հարցի ուսումնասիրում` ներառյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը	01.10.09-31.03.10*

* միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և/կամ մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով հասկացվում է ինչպես ՀՀ պետական բյուջեն, այնպես էլ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՆՊԱՏԱԿ 6»-ի գծով**

- **Նպատակը.** Հարկային մարմնի կառավարման արդյունավետ համակարգի ներդրում
- **Քաղաքականությունները.**
 - 6.1 Անցում գործառնությունների վրա հիմնված կառավարման սխեմայի: Վերափոխումն իրականացվելու է «գլխավոր գրասենյակ»-«խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն»-«տարածքային ստորաբաժանումներ» փուլերով
 - 6.2 Տարածքային ստորաբաժանումների թվի կտրուկ փոքրացում՝ այն հավասարակշռելով ռեզիդենտ սպասարկման և տվյալների մշակման կենտրոններով, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ավելի ակտիվ ներգրավմամբ
 - 6.3 Մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգի ներդրում
 - 6.4 Աշխատողների և ստորաբաժանումների կատարողական չափանիշների համակարգի ներդրում՝ այն կապելով ոչ միայն վճարված հարկերի, այլ արտադրողականության և այլ ֆունկցիոնալ ցուցանիշների հետ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
	<i>Միջոցառման անվանումը</i>	<i>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվ, ամիս, տարեթիվ)</i>
66.	Դիտարկել հարկային վարչարարության բարեփոխումների փաստաթղթից, հարկային ծառայության հայտարարած նոր առաքելությունից և 7 հիմնական նպատակներից և դրան համապատասխան քաղաքականություններից բխող հարկային ծառայության օրենսդրության մեջ փոփոխությունների անհրաժեշտությունը և համապատասխան օրենսդրական փաթեթ ներկայացնել ՀՀ կառավարություն	01.10.08-31.12.08*
67.	Հասարակության լայն խավերին իրազեկել և ծանոթացնել հարկային վարչարարության առաքելության, հիմնական նպատակների և իրականացվելիք միջոցառումների մասին: Նպատակը թափանցիկ աշխատանքի և վստահության մթնոլորտի ձևավորումն է	01.07.08-30.12.11
68.	Հարկային ծառայության ռազմավարական ծրագրավորման ընթացակարգերի կատարելագործում	01.01.09-30.05.10*
69.	Հարկային ծառայության ներսում հարկային վարչարարության ընթացակարգերի (այդ թվում՝ ստուգումների) միատեսակ կիրառման նպատակով համապատասխան ուղեցույցների և ձեռնարկների մշակում՝ նախատեսելով դրանց հրապարակման հստակ ժամանակացույցը: Նախապես ստեղծվում է ուղեցույցների մշակման ամենամյա ժամանակացույց	01.09.08 – 31.12.11
70.	Հարկային մարմինները համապատասխան կադրերով համալրելու և հարկային վարչարարության ընթացակարգերի միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով հարկային ծառայողների համար (այդ թվում՝ հարկային տեսչությունների, սպասարկման կենտրոնների աշխատողների) ուսումնական ծրագրի իրականացում՝ ելնելով ոլորտային և գործառնության առանձնահատկություններից, ինչպես նաև միջազգային առաջատար փորձից	01.10.08 – 31.12.11
71.	Հարկային ծառայողների աշխատանքների կատարողականի գնահատման համակարգի հիման վրա հարկային ծառայողների խրախուսման միանիզմների սահմանում	01.01.09-30.06.10*
72.	Հարկային եկամուտների, ապառքների, գերավճարների վերլուծության համապարփակ մեթոդաբանության մշակում: Դա պետք է հնարավորություն տա դուրս բերել ըստ ոլորտների, ըստ տարածաշրջանների, ըստ հարկատեսակների, ըստ ձեռնարկությունների չափի, ըստ ապրանքատեսակների և այլ սովորաբար կարևոր համարվող չափանիշների	01.07.08-30.05.10*

73.	Ուժեղացնել հարկային ծառայության վերլուծական-հետազոտական կարողությունները՝ ստեղծելով առանձին ենթաձևեր, համապատասխան բաղադրիչներով, ինչպես նաև ապահովելով «գիտելիքի փոխանցումը» ըստ բոլոր վերլուծության գործառույթ ունեցող ստորաբաժանումների (անկախ կառավարման մակարդակի): Ենթադրվում է նաև կանխատեսումների կարողությունների զարգացում՝ համապատասխան գործիքի ստեղծմամբ	01.12.08-31.12.11
74.	Հարկային ծառայության կենտրոնական ապարատում գործառույթների վրա հիմնված կառուցվածքի և գործառույթների սահմանում	01.07.08-30.09.08
75.	Հարկային տեսչությունների՝ գործառույթների վրա հիմնված կառուցվածքի և գործառույթների սահմանում	01.07.08-31.12.08
76.	Հարկային ծառայության տարածքային ստորաբաժանումների թվի կրճատում	01.09.08-31.12.09
77.	Հարկային ծառայողների պաշտոնների նկարագրերի սահմանում	01.10.08-31.10.10*
78.	Կատարողականի և մասնագիտական կարողությունների հիման վրա հարկային ծառայողների պաշտոնական առաջխաղացման համակարգի ներդրում	01.10.08-30.09.10
79.	Ստեղծել կատարողականի վրա հիմնված հաշվետվական համակարգ՝ նախատեսելով յուրաքանչյուր հարկային ծառայողի համար տեղեկությունների բանկի ստեղծում	01.10.08-31.10.09
80.	(80-րդ կետն ուժը կորցրել է 17.02.11թ. N129-Ն)	

** միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և/կամ մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով հասկացվում է ինչպես ՀՀ պետական բյուջեն, այնպես էլ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:*

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՆՊԱՏԱԿ 7»-ի գծով**

- **Նպատակը.** Հարկային վարչարարության տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարման ապահովում:
- **Քաղաքականությունները.**
 - 7.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների նոր ռազմավարության սահմանում՝ ապահովելու համար հարկային ծառայության նոր սահմանված առաքելության և հիմնական 7 նպատակների իրագործումը
 - 7.2 Հարկ վճարողների մասին ամբողջականացված տվյալների ժամանակակից դարանի ստեղծում՝ ներառյալ երրորդ անձանցից օրենքով ստացվածը: Համակարգը պետք է ապահովի հարկ վճարողների անհատական տվյալների գաղտնիությունը
 - 7.3 Առավելագույնի հասցնել ժամանակակից ՏՏ համակարգերի կիրառումը հարկ վճարողների և հարկային ծառայության ներքին ստորաբաժանումների կողմից. Ինտերնետ, ներքին ցանց, պորտալներ, ժամանակակից լիցենզավորված ծրագրային ու գործիքային մեթոդների գծով վերապատրաստումներ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
	<i>Միջոցառման անվանումը</i>	<i>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվ, ամիս, տարեթիվ)</i>
81.	Հարկային ծառայությունում ՏՏ ոլորտի զարգացման ռազմավարության երկարաժամկետ ծրագրի մշակում	01.09.08-31.11.08
82.	Մշակել ուղեցույցեր, տարբեր ընթացակարգեր, հուշաթերթիկներ՝ նպատակ ունենալով առավելագույնի հասցնել ժամանակակից ՏՏ տեխնոլոգիաների, գործիքների օգտագործումը հարկային ծառայության ներսում կառավարման բարելավման ու արդյունավետության մեծացման համար	01.01.09-31.12.11
83.	Հարկային ծառայության տվյալների բազայի վերակառուցում՝ նպատակ ունենալով նաև արտաքին օգտագործողների համար մատչելի տեղեկատվության ապահովում, մասնավորապես՝ էլեկտրոնային կառավարման ընդհանուր հայեցակարգի ներքո: Տվյալների բազան պետք է իր մեջ «ներառի» բազմաթիվ տնտեսական դասակարգիչներ օգտագործողների վերլուծական պահանջները ապահովելու համար՝ նախատեսելով միայն օրենքի համաձայն հավաքագրվող տեղեկություններ	01.12.08-31.12.11
84.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու համար համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտության ուսումնասիրություն	01.10.08-31.12.08
85.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու համար համապատասխան համակարգչային ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքի պատրաստում (շարունակական)՝ յուրաքանչյուր հարկատեսակի համար	01.09.08-30.12.10*
86.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացման ծրագրի ներդրում և փորձնական կիրառում	01.10.08-31.03.09
87.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացման ուղեցույցի պատրաստում	01.10.08-31.05.10
88.	Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ (հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ, տեղեկանքներ) չներկայացրած հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ ծրագրի ներդրում:	01.12.08-31.07.10
89.	Վճարումներ չկատարած էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ներկայացման ծավալի և պարբերականության սահմանման համար օրենսդրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտության ուսումնասիրություն	01.11.08-31.03.10

90.	Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող հարկ վճարողների հաշվետվությունների մշակման ավտոմատացված նորացված համակարգի ներդրման և վճարումներ չկատարած հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ իրականացման համար համապատասխան համակարգչային ծրագրի մշակում	01.12.08-31.07.10*
91.	Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող հարկ վճարողների հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի և վճարումներ չկատարած հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի փորձնական կիրառում:	01.02.09-30.09.10
92.	Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող հարկ վճարողների հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի և հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ամբողջական կիրառում:	01.04.09-30.11.10*
93.	Կրկնությունների և թղթային հաշվետվությունների (տեղեկատվության) բացառման նպատակով հարկային տեսչություններից հավաքագրվող տեղեկատվության «գույքագրում» և օպտիմալացում	01.08.08-31.10.08
94.	Հարկ վճարողների վերաբերյալ 3-րդ անձանցից ստացվող տեղեկությունների ընդունման ծրագրի մշակում և տեղեկատվական բազայի ստեղծում՝ նախատեսելով օգտագործողների համար առավել մատչելիություն	01.02.09-30.06.10*
95.	Հարկ վճարողների մասին ամբողջականացված տվյալների ժամանակակից դարանի ստեղծման նպատակով դրա օգտագործողների կարիքների գնահատում և բազայի նորացում	01.10.08-31.03.10

** միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և/կամ մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով հասկացվում է ինչպես ՀՀ պետական բյուջեն, այնպես էլ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:*

ՄԱՍ Գ. ԱՍՓՈՓՈՒՄ

Սույն փաստաթղթի նպատակն է շրջագծել հարկային բարեփոխումները:

Սահմանվել են նպատակներ և դրանց համապատասխան իրականացվելիք քաղաքականություններ: Փաստաթուղթն ավարտվում է այդ երկու մակարդակների խնդիրների լուծման համար անհրաժեշտ գործողությունների կոնկրետ ցանկով: Ստացվում է 7 հիմնական նպատակ, 29 քաղաքականություն և այդ ամենի ապահովման համար անհրաժեշտ՝ մինչև 2011 թվականի վերջն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք 109 միջոցառում:

Հաշվի առնելով փաստաթղթի կարևորությունը՝ 7 հիմնական նպատակները և համապատասխան քաղաքականությունները լայնորեն ու ակտիվորեն քննարկվել են հանրության, գործարար ու պրոֆեսիոնալ միությունների, հարկային ծառայության աշխատողների հետ և այլն: Այն տեղադրված է եղել հարկային ծառայության ինտերնետային կայքում՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ուղարկվել է միջազգային կազմակերպություններին կարծիքի, ինչպես նաև տարածվել տնտեսական լրագրողների շրջանում: Ստացվել են բազմաթիվ առաջարկություններ, որոնք բոլորը մշակվել են ու նպաստել փաստաթղթի վերջնական ամփոփմանը ու հատկապես նպաստել են դրանց հիման վրա գործողությունների ցանկի որոշմանը և դրա ժամկետների, կատարողականության չափանիշների սահմանմանը, ռիսկերի զգացողության հաստատմանը կամ հանելու:

Հարկային վարչարարական բարեփոխումների սույն ծրագրի հիմնական ուղղորդող փաստաթուղթն է եղել ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության ծրագիրը: Բացի այդ, քանի որ նմանատիպ խոշոր ծրագիրը միշտ զուգակցվում է այլ ծրագրերի հետ և գտնվում է այլ հանգամանքների ազդեցության ներքո, ապա բազմաթիվ քայլեր են ձեռնարկվել այն համապարփակ և իրատեսական դարձնելու համար: Մանրամասն դիտարկվել և հաշվի են առնվել.

- հայաստանյան բոլոր հարակից այլ ծրագրերը. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, ՀՀ միջնաժամկետ ծախսերի եռամյա ծրագիր,

- ՀՀ ԿԱ ՀՊԾ կողմից նախկինում հաստատված բոլոր զարգացման ծրագրերի դրույթները, ներառյալ ներկայումս գործող “ՀՀ հարկային համակարգի զարգացման 2007-2009թթ. եռամյա ծրագիրը”՝ հաստատված ՀՀ կառավարության կողմից 2007 թվականին, ինչպես նաև 2005 թվականին հաստատված “Հարկային հավաքագրումներում ինքնազնադատման համակարգի ներդրման ծրագիրը”, որը մշակվել էր Համաշխարհային բանկի մասնագետների մասնակցությամբ,

- միջազգային կազմակերպությունների կողմից հարկային վարչարարական հարցերով վերջին տարիների բոլոր զեկույցներում տեղ գտած առաջարկությունները. Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ,

- վերջին երեք տարում Հայաստանում, ՀՀ ԿԱ ՀՊԾ-ում իրականացված ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի հարկային կատարելագործման ծրագրի» կատարված բոլոր աշխատանքները, երաշխավորությունները,

- «ըստ Եվրահանձնաժողովի հավանության արժանացրած ցուցանիշների համակարգի Հայաստանի հարկային վարչարարական կարողությունների գնահատում» փաստաթղթի երաշխավորությունները՝ ներկայացված 2008 թվականի հունվարին:

Փաստաթղթով առաջին անգամ Հայաստանի հարկային վարչարարության պատմության մեջ սահմանվել է առաքելություն, ապա դրան համահունչ սահմանվել են և հիմնական նպատակները, և դրանց հասնելու համար կոնկրետ միջոցառումները:

Փաստաթուղթը պարունակում է.

- ակնկալվելիք արդյունքների սահմանումները,

- այն չափանիշները, ցուցանիշները, ըստ որի պետք է որոշվի, թե արդյոք հարկային ծառայությունը կարողացել է հասնել իր նպատակներին և թե արդյոք իր իրականացրած փաստացի քաղաքականությունը համապատասխանել է իր առաքելությանը և հայտարարված ու հանրության հետ լայնորեն քննարկված 7 հիմնական նպատակներին,

- ռիսկերի նկարագիրը և այն ենթադրությունները, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել այն միջավայրի մասին, որում մոտակա 3-3.5 տարում պետք է իրագործվի այս ծրագիրը,

- միջոցառումների ցանկը՝ ըստ 7 հիմնական նպատակների,

- միջոցառումների ցանկը ներկայացված է, հարմարության և օգտագործման արդյունավետության համար, նաև ըստ աշխատանքների սկսման աճող ժամկետների, ինչպես նաև առանձնացված են այն միջոցառումները, որոնց գծով հարկային ծառայությունը կարիք ունի մարդկային և ֆինանսական արտաքին ռեսուրսների:

Նախատեսվում է այս փաստաթղթի հաստատումից հետո ամբողջ օրենսդրական դաշտը վերափոխել, իրավական հիմքերը ամրապնդելու նպատակով՝ նման ծավալի մեծ ռեֆորմի իրականացումը ապահովելու համար:

Ենթադրվում է, որ պետք է գործարկված լինի ռեֆորմի միջոցառումների դիտարկման համակարգ, ներառյալ ռիսկերի կառավարումը: Այդ ամենը ենթադրում է ընթացքում փաստաթղթում փոփոխությունների իրականացում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2009-2012թթ. ԾՐԱԳԻՐԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մաքսային ծառայությունն այն կառույցն է, որը մշտապես առանցքային նշանակություն ունի պետության տնտեսական զարգացման և արտաքին առևտրի կառավարման գործում:

Մաքսային մարմինները, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության, տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի և ներքին շուկայի պաշտպանվածության ապահովողը, կիրարկում են մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված նորմերը և վերահսկում են դրանց կատարումը:

Մաքսային ծառայությունն այն կառույցն է, որի հիմնական առաքելությունը պետք է ուղղված լինի տնտեսության և հասարակության պաշտպանությանը: Այս շրջանակներում առանձնակի ուշադրության է արժանի այնպիսի կարևորագույն մարտահրավերների դիմագրավումը, ինչպիսիք են մաքսային գործի բնագավառում կատարվող հանցագործությունների և մաքսային կանոնների խախտումների դեմ պայքարը: Ահաբեկչության անընդհատ ահագնացող տեմպերը, թմրամիջոցների, զենքի, մշակութային և պատմական նշանակություն ունեցող ապրանքների մաքսանենգ ճանապարհով տեղափոխման ուղիների և մեթոդների կատարելագործումը հանգեցրել են իրավապահ ոլորտում նոր խնդիրների ստեղծմանը և դրանց լուծմանն ուղղված պետության անհապաղ միջամտության անհրաժեշտությանը: Ի լրումն վերոգրյալ գործառնությունների, մաքսային մարմիններն ապահովում են նաև մաքսային վճարների հավաքագրումը:

Նպատակ ունենալով մշակել մաքսային ծառայության գործունեության ռազմավարությունը և սահմանել մաքսային վարչարարության ուղղությունները՝ վերադաս մաքսային մարմնի կողմից կազմվել է առանցքային սկզբունքներ ունեցող արդիականացման ծրագիր: Ծրագրի հիմքում դրված է այն գաղափարը, որ մաքսային եկամուտների անհրաժեշտ մակարդակը պետք է ապահովել մաքսային վարչարարության արդյունավետության շնորհիվ և զերծ մնալ մաքսային բեռի ծանրացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններից: Այս ուղղությամբ կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որդեգրված այն քաղաքականությունը, որ մաքսային (հարկային) բեռի արդարացի բաշխման գործընթացում պետք է բացառվի առանձին ոլորտների, գործունեության առանձին տեսակների, առանձին կազմակերպությունների համար որևէ բնույթի արտոնությունների տրամադրումը: Մաքսային վարչարարության կատարելագործման նպատակով ընտրված բոլոր սկզբունքներն ունեն մեկ նպատակ.

մաքսային ծառայությունը դարձնել աննկատ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար և տեսանելի՝ ոչ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների կամ մաքսանենգության փորձ կատարողների համար:

Մաքսային վարչարարության ռազմավարության սկզբունքները

Մաքսային վարչարարության ռազմավարությունն առաջիկա տարիներին հիմնվելու է կառավարության 2008-2012թթ. գործունեության ծրագրով սահմանված մաքսային վարչարարության բարեփոխումների և արդիականացման վրա՝ ուղղված լինելով մաքսային եկամուտների ավելացմանը, տնտեսվարող սուբյեկտների միջև մաքսային և հարկային բեռի արդարացի բաշխմանը, մաքսանենգության դեմ պայքարին և մաքսային կանոնների խախտման դեպքերի թվի նվազմանը, տնտեսվարող սուբյեկտներին բարձրորակ ծառայությունների մատուցմանը և դրանց ժամկետների կրճատմանը, մաքսային համակարգի թափանցիկության ապահովմանը և ազնիվ վարվելակերպի ձևավորմանը:

Իրականացվող բարեփոխումների նպատակն է ունենալ ամբողջապես ավտոմատացված մաքսային վարչարարություն, որիսկերի վրա հիմնվող համապատասխանության ծրագիր, ինչպես նաև մասնագիտական հմտություններով օժտված ազնիվ աշխատակիցներ:

Մաքսային վարչարարության ռազմավարության բարեփոխումները գործարար միջավայրում պետք է հանգեցնեն այն մթնոլորտի ձևավորմանը, որ տնտեսվարող սուբյեկտները հպարտությամբ ներկայացնեն իրենց կողմից պետությանը վճարված հարկերի մեծությունները, իսկ հարկերից խուսափողները կամ մաքսանենգությամբ զբաղվողները դիտվեն որպես օրինական պետություն ձևավորելու հակառակորդներ:

Մաքսային վարչարարությունն արդիականացնելու նպատակով վերադաս մաքսային մարմինը ընդունել է 7 առանցքային սկզբունք, որոնք հետևողականորեն իրականացնելու արդյունքում մաքսային ծառայությունը կլինի աննկատ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար և տեսանելի՝ ոչ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների կամ մաքսանենգության փորձ կատարողների համար: Վերադաս մաքսային մարմինը այս սկզբունքների հիման վրա, ըստ կատարման ժամկետների և պատասխանատուների, կհաստատի միջոցառումների ժամանակացույց՝ հետագայում գնահատելով կոնկրետ գործողության իրականացման արդյունքը: Մաքսային ծառայությունը հետևողական է լինելու վերոգրյալ 7 սկզբունքների իրագործման գործում՝ մաքսային վարչարարության բարեփոխումներում ունենալով հաջողության հետևյալ գրավականները.

1. Ունակ, հաստատակամ և դինամիկ առաջնորդում:
2. Շարունակական քաղաքական կամք և աջակցություն:
3. Օրենսդրություն, որը հիմք պետք է ծառայի բարեփոխումների իրականացման համար:
4. Համարժեք ռեսուրսներ, ֆինանսավորում:
5. Պետության, հասարակության և այլ շահագրգիռ կողմերի մասնակցություն և օժանդակություն:
6. Բարեփոխումները մշակող և իրականացնող օղակների միջև համագործակցություն:

Այս գրավականներից գրեթե բոլորն առկա են Հայաստանի Հանրապետությունում: Մաքսային վարչարարության բարեփոխումներում, կարծում ենք, որ առանձնակի կարևոր է շարունակական քաղաքական կամքը և բարեփոխումներն իրականացնողների պատրաստակամությունը: Բարեփոխումների ողջ ժամանակաշրջանում մաքսային ծառայությունը միջոցներ կձեռնարկի մաքսային վճարների հավաքագրման աշխատանքները և իրեն ամրագրված պարտականությունները կատարելու ուղղությամբ:

I. ՄԿԶՐՈՒՆԹ. ՏՆՏԵՍԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄՑ ԵՐՄՈՒԾՎԱԾ ԼՈՒՅՆՍԵՐՈՒ ՄՈՐԱՆՔՆԵՐԻ ԴԵՄՍՑ ՀԱՎԱՍԱՐԱՉՍՓ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄ

Հարկեր վճարելը սահմանադրական պարտադիր նորմ է: Թեև հարկերի վճարումը պարտադիր է բոլորի համար, այնուհանդերձ տնտեսվարող սուբյեկտներն առավել պատրաստակամ են վճարում հարկերը, երբ դրանք վճարվում են բոլորի կողմից՝ իրենց տնտեսական գործունեության արդյունքներին համապատասխան: Արդարությունը հաճախ գնահատվում է այն սկզբունքով, թե արդյոք տնտեսական միևնույն մակարդակի վրա գտնվող և նմանատիպ գործունեություն վարող տնտեսվարող սուբյեկտները մոտավորապես հարկի նույն մեծությունն են վճարում: Անկախ կարգավիճակից և զբաղեցրած դիրքից յուրաքանչյուր անձ պետք է պետությանը վճարի իր հասանելիք կամ իր գործունեության արդյունքում առաջացող հարկերը: Հավասարության սկզբունքի կիրառման ուղղությամբ պետք է իրականացվի հետևյալ քաղաքականությունը.

1. Բացառել պետական ծառայողների հովանավորչությունը ձեռնարկատիրական գործունեության ոլորտում:

2. Ունենալ հստակ, պարզ և թափանցիկ օրենսդրություն, մաքսային պարզեցված ընթացակարգեր: Մաքսային համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքի վերաբերյալ իրազեկել հասարակությանը:

3. Ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ տնտեսվարող սուբյեկտների օրինական դաշտում գտնվելը լինի առավել պաշտպանված և նպաստավոր:

4. Մաքսային ծառայության ինտերնետային կայքում տեղադրել խոշոր ԱՏԳ իրականացնող տնտեսվարող սուբյեկտների և իրավախախտում իրականացնողների վերաբերյալ տեղեկատվությունը:

5. Ձևավորել Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնի հիման վրա մաքսային արժեքների որոշման հստակ չափանիշներ՝ օգտագործելով ինտերնետային կայքերում տեղադրված տեղեկատվությունը, ՀՀ ներքին շուկայում իրականացված ուսումնասիրությունը և հետբացթողումային հսկողության արդյունքները, օրենսդրությամբ սահմանված երրորդ անձանցից ստացված տեղեկությունները, ինչպես նաև կիրառելով Համաշխարհային մաքսային կազմակերպության երաշխավորությունները:

6. Իրականացվող արդյունավետ հետբացթողումային հսկողության շնորհիվ՝ ներմուծումների ընդհանուր շրջանառության մեջ ավելացնել ներմուծման այն մաքսային հայտարարագրերի տեսակարար կշիռը, որոնց մաքսային արժեքը որոշվում է գործարքի գնի մեթոդով:

7. Անկախ ներմուծումների կամ արտահանումների քանակից և արժեքային մեծություններից, տարբեր տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հավասար պայմաններում կիրառել հավասար մոտեցումներ:

Ակնկալվող արդյունք. Մաքսային մարմինների կողմից, բոլոր արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների նկատմամբ հավասար մաքսային ռեժիմի կիրառում և ներմուծված նույնատիպ ապրանքների դիմաց միևնույն մաքսային վճարների գանձում:

N	Միջոցառման անվանումը	Կատարման Ժամկետը
1.	Մաքսային ընթացակարգերի հրապարակայնությունը և թափանցիկությունն ապահովել ինտերնետային կայքի միջոցով, ինչպես նաև հրապարակել մաքսային ընթացակարգերը, մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկատվությունը պարզաբանող տեղեկատուներ, ձեռնարկներ և ժողովածուներ, պատրաստել տեսահոլովակներ, կազմակերպել տեղեկատվական միջոցառումներ, հեռուստահաղորդումներ, պրես կոնֆերանսներ, հարցազրույցներ կամ առանձին հանդիպումներ	2009թ. II եռամսյակ և շարունակական
2.	Շարունակել պաշտոնական կայքում և թեժ հեռախոսագծով ստեղծված հնարավորության գործարկումը, որի շնորհիվ քաղաքացիները և տնտեսվարող սուբյեկտները փոստով կամ հեռախոսագանգով կարող են դիմել վերադաս մաքսային մարմնի ղեկավարին	2009թ. II եռամսյակ և շարունակական
3.	Մաքսային ծառայության գծով առանձին պարբերականի հրատարակում «Մաքսատուն»	2009թ. II եռամսյակ
4.	Մաքսային ծառայության գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության հրապարակում	2009թ. II եռամսյակ և շարունակական
5.	Եվրոպական Հանձնաժողովի «Օրինակելի մաքսային ծառայություն» (Customs Blueprints) ձեռնարկի հայերեն լեզվով տարբերակի հրատարակություն	2009թ. II եռամսյակ և շարունակական
6.	Մաքսային օրենսդրության վերանայում՝ միջազգային չափանիշներին (Եվրամիության օրենսդրություն, միջազգային մաքսային պայմանագրեր և այլն) համապատասխանեցնելու նպատակով	2009թ. IV եռամսյակ և շարունակական

II. ՄԿԶԲՈՒՆՔ. ՄԱՔՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Մաքսային վարչարարության կատարելագործման առանցքային հիմնախնդիրներից է մաքսային ծառայության արդյունավետ կառավարումը: Մաքսային ծառայությունը կադրային քաղաքականության առումով պետք է կիրառի ժամանակակից կառավարմանը համահունչ ռազմավարություն: Այդ առումով անհրաժեշտ է կարողանալ գնահատել կատարվող աշխատանքների արդյունավետությունը: Մասնավորապես աշխատանքի գնահատման միջոցով պետք է բացահայտվեն մաքսային ծառայողի մասնագիտական ունակությունները, որակավորման աստիճանը, որակական հատկանիշները, էթիկայի կանոնները պահպանելու կարողությունը: Աշխատանքը գնահատելու արդյունքում պետք է բացահայտվեն մաքսային ծառայության այն ստորաբաժանումները, որտեղ անհրաժեշտ է լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը:

Մաքսային ծառայողներին մասնագիտական բարձր գիտելիքներ և հմտություններ հաղորդելու նպատակով պետք է իրականացվի հետևյալ քաղաքականությունը.

1. Մաքսային ծառայողների վերապատրաստում:
2. Աշխատանքային առաջխաղացում. ըստ ընտրված չափորոշիչների համեմատական գնահատման միջոցով իրականացնել մաքսային ծառայության աշխատակիցների առաջխաղացման գործընթաց:
3. Վարձատրում. աշխատանքի գնահատման հստակ չափանիշների սահմանում, վարձատրման իրատեսական համակարգի ներդրում՝ կիրառելով պարզևստրիման նոր չափորոշիչներ:
4. Աշխատանքի կառավարում. քանակական գնահատականների և արդյունքների գրանցման համակարգի ներդրում, աշխատողների էթիկայի կանոնների մշակում, անհրաժեշտության դեպքում խթանման և խրախուսման, ինչպես նաև կարգապահական միջոցների կիրառում:
5. Մաքսային ծառայությունում ռոտացիայի սկզբունքի արմատավորում:
6. Մաքսային գործի ուսուցման պարբերական դասընթացների կազմակերպում՝ համակարգը մրցութային կարգով բանիմաց և կրթված կադրերով համալրելու նպատակով:

Ակնկալվող արդյունք. Մաքսային ծառայությունում պաշտոնները կգրադեցվեն մասնագիտական գիտելիքներ և ազնիվ վարվելակերպ ունեցող կադրերով:

N	Միջոցառման անվանումը	Կատարման Ժամկետը
7.	Մասնագիտական գիտելիքների բարձրացման նպատակով մաքսային ծառայության ուսումնական կենտրոնում կազմակերպել վերապատրաստման դասընթացներ	2009թ. II եռամսյակ և շարունակական
8.	Մշակել մաքսային ծառայողների իրականացված աշխատանքների գնահատականների և արդյունքների գրանցման համակարգ	2009թ. II եռամսյակ
9.	Մաքսային ծառայության աշխատակիցների արտաքին վերապատրաստում (գործուղում այլ երկրների մաքսային բարձրագույն դպրոցներ)	2009թ. II եռամսյակ և շարունակական
10.	Մաքսային գործի ուսուցման դասընթացների կազմակերպում բուհերի շրջանավարտների համար	2009թ. II եռամսյակ և շարունակական
11.	Մաքսային գործի տարբեր ոլորտների գծով ուսումնական տարբեր ինստիտուտիվ ծրագրերի ձեռքբերում և դրանց միջոցով դասընթացների կազմակերպում	2009թ. III եռամսյակ
12.	Այլ երկրների մաքսային ծառայությունների իրավապահ ինստիտուտներում մաքսային ծառայողների վերապատրաստում (հատկապես մաքսանենգության դեմ պայքարի ոլորտում)	2009թ. IV եռամսյակ

III. ՄԿԶԲՈՒՆՔ. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Մաքսային հսկողության համակարգի զարգացման նպատակով վերջին տարիների ընթացքում մշակվել և ընդունվել են մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, որոնց միջոցով մաքսային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտը համապատասխանեցվել է միջազգային լավագույն փորձին:

Սակայն մաքսային համակարգում առկա են այնպիսի խնդիրներ, որոնց կարգավորումը հնարավոր չէ իրականացնել միայն իրավանորմատիվային փաստաթղթերի ընդունմամբ: Այդ խնդիրներից է՝ ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի ներդրումը և զարգացումը:

Այս խնդրի կարգավորման հրատապությունը պայմանավորված է ռիսկերի կառավարման գործընթացում ռիսկերի բացահայտման, դասակարգման, գնահատման և առաջադիմական տեխնոլոգիաների կիրառմամբ դրանց նվազեցման ուղղությունների ընտրությամբ:

Ռիսկերի կառավարման համակարգը թույլ կտա բարձրացնել մաքսային հսկողության արդյունավետությունը, միննույն ժամանակ կհեշտացնի և կարագացնի մաքսային ձևակերպման և մաքսային հսկողության իրականացումը:

Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քաղաքականությունները.

1. Մաքսային համակարգի ռիսկերի կառավարման չափորոշիչներին զուգահեռ կիրառել նաև լոկալ կանոններ, հաշվի առնելով յուրաքանչյուր տարածաշրջանային մաքսային մարմնի առանձնահատկությունները՝ կապված աշխարհագրական դիրքի, տրանսպորտային միջոցների տեսակի, տեղափոխվող ապրանքների առանձնահատկության, տնտեսվարող սուբյեկտների հետ և այլն: Այդ առումով յուրաքանչյուր ռիսկի չափորոշիչ կարող է ունենալ տարբեր ցուցանիշներ՝ կախված տարածաշրջանային մաքսային մարմնից:

2. Ռիսկի չափանիշները պետք է պարբերաբար վերանայվեն և արդիականացվեն՝ հաշվի առնելով նախկինում իրականացված վերահսկողական և հետաքննչական գործունեության արդյունքները:

3. Մաքսային գնման համար ապրանքների ընտրությունն իրականացնել հիմնվելով դրանց ռիսկայնության աստիճանի վերլուծության վրա:

4. Առաջադիմական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովել ռիսկային ապրանքներին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը և փոխանակումը:

Ակնկալվող արդյունք. Ռիսկերի կառավարման՝ ժամանակակից պահանջները բավարարող համակարգի վրա հիմնված մաքսային հսկողության առկայություն:

N	Միջոցառման անվանումը	Կատարման Ժամկետը
13.	Ռիսկի կառավարման համակարգում ստեղծել տեղեկատվության ձևավորման և հավաքագրման բազա	2009թ. II եռամսյակ
14.	Ռիսկի կառավարման համակարգում ձևավորել մոնիտորինգի, վերահսկման, ռիսկերի չեզոքացման կամ նվազեցման համակարգ	2009թ. III եռամսյակ
15.	«Ռիսկի պրոֆիլներ» ստեղծում, որոնք ընդգրկում են տեղեկատվություն և ցուցումներ մաքսային մարմիններին՝ ռիսկային ապրանքների, մաքսային հսկողության իրականացման, հսկողության խորության, հաճախակիության և այլնի վերաբերյալ	2009թ. III եռամսյակ
16.	Մաքսային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց ուսուցում և վերապատրաստում	2009թ. IV եռամսյակ

IV. ՄԿԶՐՈՒՆՔ. ԻՆՔՆԱՅԱՑԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴԱՅՆՈՒՄ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ներկայումս մաքսային ծառայության առջև դրված գերակա խնդիրներից է՝ ինքնահայտարարագրման և էլեկտրոնային կապուղիներով մաքսային հայտարարագիր ներկայացնողների շրջանակի ընդլայնումը և մաքսային միջնորդների ինստիտուտի կայացումը: Նպատակին հասնելու համար մաքսային ծառայությունը պետք է իրականացնի հետևյալ քաղաքականությունը.

1. Աջակցի տնտեսվարող սուբյեկտներին և մաքսային միջնորդներին՝

- բոլոր մաքսային մարմիններում կամ դրանց կից տարածքներում ստեղծելու ինքնահայտարարագրման և մաքսային միջնորդների գրասենյակներ,

- տնտեսվարող սուբյեկտների գրասենյակներից էլեկտրոնային կապուղիների միջոցով մաքսային հայտարարագրերի ներկայացման և ընդունման հնարավորություն ստեղծելու հարցում,

- մաքսային պահեստներում ստեղծելու մաքսային միջնորդների գրասենյակներ:

2. Սահմանել մաքսային ձևակերպումների մասնագետների որակավորման քննությունների ծրագիրը և դրանց անցկացման կարգը:

Ակնկալվող արդյունք. Մաքսային ծառայողի և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողի շփումների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:

N	Միջոցառման անվանումը	Կատարման Ժամկետը
17.	Աջակցել բոլոր սահմանային մաքսային կետերում ինքնահայտարարագրման և մաքսային միջնորդների կողմից մաքսային հայտարարագրերի լրացման գրասենյակների ստեղծմանը	2009թ. II եռամսյակ
18.	Աջակցել ՀՀ մարզերի մաքսային պահեստներում մաքսային միջնորդների գրասենյակների ստեղծմանը	2009թ. II եռամսյակ
19.	«Մաքսային միջնորդի կողմից մաքսային ձևակերպումների և մաքսային փոխադրողի կողմից մաքսային փոխադրումների վերաբերյալ վերադաս մաքսային մարմին հաշվետվության ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում	2009թ. II եռամսյակ
20.	«Մաքսային միջնորդի և մաքսային փոխադրողի մատուցած ծառայությունների դիմաց սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում	2009թ. II եռամսյակ
21.	«Մաքսային ձևակերպումների մասնագետների որակավորման քննությունների ծրագիրը և դրանց անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում	2009թ. II եռամսյակ

V. ՄԿԶԲՈՒՆՔ. ՄԱՔՄԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ

Մաքսային ընթացակարգերի պարզեցումը պետք է իրականացվի մաքսային մարմիններին ներկայացվող փաստաթղթերի և մաքսային մարմիններում տնտեսվարող սուբյեկտների կողմից ծախսվող ժամանակահատվածի կրճատմամբ: Այս նպատակների իրագործման համար անհրաժեշտ է.

1. Վերանայել մաքսային հսկողության նպատակով ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը:
2. Միջազգային ճանապարհային փոխադրումների կոնվենցիայի (TIR) շրջանակներում ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների համար սահմանել պարզեցված մաքսային ընթացակարգեր:
3. Մաքսային ձևակերպումների ժամանակ կիրառել բանկային երաշխիքի տրամադրման մեխանիզմը:
4. Ապահովել տարբերակված մոտեցում տնտեսվարող սուբյեկտների միջև՝ սահմանելով առավել պարզեցված ընթացակարգեր բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար:

Ակնկալվող արդյունք. Մաքսային ընթացակարգերի պարզեցման շնորհիվ ապահովել տնտեսվարող սուբյեկտների կողմից մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատում:

N	Միջոցառման անվանումը	Կատարման Ժամկետը
22.	ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1930-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն, նպատակ ունենալով պարզեցնել Միջազգային ճանապարհային փոխադրումների կոնվենցիայի (TIR) շրջանակներում ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների տեղաշարժը ՀՀ մաքսային սահմանով	2009թ. II եռամսյակ
23.	«Մաքսային հայտարարագրում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ ճշգրտումների փաստաթղթի ձևը հաստատելու մասին» պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանի նախագծի ներկայացում	2009թ. II եռամսյակ
24.	«Անմաքս առևտրի խանութների պահեստի և առևտրի սրահի ապրանքների շարժի հաշվառման կարգը սահմանելու մասին» պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում	2009թ. II եռամսյակ
25.	Հատուկ ծրագրային համակարգերի ներդրում, որոնց միջոցով հնարավոր կլինի մշտապես մոնիտորինգի ենթարկել մաքսային ձևակերպումների ժամանակահատվածը՝ կրճատելով ավելորդ ժամանակը	2010 թ. II եռամսյակ
26.	Էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ներդրում և կիրառում	2010 թ. III եռամսյակ
27.	Միասնական խորհրդատվական կենտրոնի ստեղծում, որը տեխնիկական աջակցություն կցուցաբերի տնտեսվարող սուբյեկտներին մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների հարցում	2010թ. I եռամսյակ
28.	Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկի և բովանդակության համապատասխանեցում միջազգային չափանիշներին	2010թ. II եռամսյակ
29.	«Մեկ կանգառ» սկզբունքի ներդրում, որը թույլ կտա բոլոր մարմինների կողմից անցկացվող հսկողությունները իրականացնել նույն վայրում և նույն պահին	2010թ. IV եռամսյակ
30.	Մաքսատների և մաքսային պահեստների միջև տեղեկատվության փոխանակման համար մեկ միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում	2010թ. IV եռամսյակ
31.	Բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար առավել պարզեցված ընթացակարգերի սահմանում	2012թ. II եռամսյակ

VI. ՄԿԶԲՈՒՆՔ. ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Մաքսային մարմինները մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ իրականացվող մաքսային հսկողության, ինչպես նաև մաքսային վճարների հավաքագրման և ՀՀ պետական բյուջե փոխանցման գործընթացն իրականացնելիս կարևորում են համագործակցությունը այլ պետական մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Այս տեսանկյունից կարևոր է տեղեկատվության փոխանակման նոր արդյունավետ միջոցների ներդրումը: Մասնավորապես.

1. Նոր տեղեկատվական համակարգերի ու ցանցերի ներդրում և կիրարկում:

2. Պետական մարմինների հետ, ըստ իրավասությունների շրջանակի (օրինակ. իրավապահ մարմինների հետ՝ մաքսանենգության դեպքերի բացահայտում կամ բացահայտումից հետո հետագա ընթացք, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության հետ՝ ապրանքների իրացման գործողություններ և այլն) համագործակցություն և համագործակցության արդյունքում պետական մարմինների միջև մեկ միասնական տեղեկատվական բազայի ձևավորում:

3. Մաքսային գործին առնչվող տեղեկությունների փոխանակման նպատակով օտարերկրյա պետությունների մաքսային ծառայությունների հետ համագործակցություն և էլեկտրոնային կապուղիներով մաքսային հայտարարագրերի ստացում:

4. Այլ երկրների մաքսային ծառայությունների հետ համաձայնագրերի, փոխըմբռնման հուշագրերի կնքում, ինչը հնարավորություն կընձեռի պարբերաբար տեղեկատվություն փոխանակել նրանց հետ:

5. Մաքսային կոնվենցիաներին միացում, միջազգային կազմակերպությունների հետ մաքսային համագործակցության ակտիվացում:

Ակնկալվող արդյունք. էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման շնորհիվ մաքսային հսկողության արդյունավետության բարձրացում:

N	Միջոցառման անվանումը	Կատարման Ժամկետը
32.	Բտալիայի Հանրապետության մաքսային ծառայության հետ միջկառավարական համաձայնագրի ստորագրում	2009թ. II եռամսյակ
33.	Ամերիկայի Միացյալ Նահանգների մաքսային ծառայության հետ միջկառավարական համաձայնագրի նախագծի շուրջ բանակցություններ	2009թ. II եռամսյակ
34.	Ֆրանսիայի Հանրապետության մաքսային ծառայության հետ միջկառավարական համաձայնագրի նախագծի շուրջ բանակցություններ	2009թ. II եռամսյակ
35.	Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային ծառայության հետ միջկառավարական համաձայնագրի նախագծի շուրջ բանակցություններ	2009թ. III եռամսյակ
36.	Միացյալ Արաբական Էմիրությունների մաքսային ծառայության հետ միջկառավարական համաձայնագրի նախագծի շուրջ բանակցություններ	2009թ. IV եռամսյակ
37.	Նոր տեղեկատվական համակարգերի ու ցանցերի ներդրում և կիրառում	2010թ. I եռամսյակ
38.	Լիտվայի Հանրապետության մաքսային ծառայության հետ միջկառավարական համաձայնագրի նախագծի շուրջ բանակցություններ	2010թ. I եռամսյակ
39.	Մաքսանենգության դեմ պայքարի բնագավառում այլ երկրների մաքսային ծառայությունների համապատասխան ստորաբաժանումների հետ տեղեկատվության փոխանակման համաձայնագրերի կնքում	2010թ. I եռամսյակ
40.	Թաիլանդի Թագավորության հետ միջկառավարական համաձայնագրի նախագծի շուրջ բանակցություններ	2010թ. II եռամսյակ
41.	Կիոտոյի վերանայված կոնվենցիային միացում	2010թ. II եռամսյակ
42.	Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ միջկառավարական համաձայնագրի նախագծի շուրջ բանակցություններ	2010թ. IV եռամսյակ
43.	Համագործակցել Վրաստանի հետ ՀՀ և Վրաստանի մաքսային սահմանին համատեղ մաքսային կետ ստեղծելու ուղղությամբ	2012թ. IV եռամսյակ
44.	Սահմանների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով պետական տարբեր մարմինների միջև միասնական տեղեկատվական բազայի ձևավորում	2012թ. IV եռամսյակ
45.	Իսրայելի Պետության հետ միջկառավարական համաձայնագրի նախագծի շուրջ բանակցություններ	2012թ. I եռամսյակ

VII. ՄԿԶԲՈՒՆՔ. ՄԱՔՄԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄԸ

Բարձրորակ և արդյունավետորեն գործող մաքսային ծառայություն ունենալու պայմաններից մեկը ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ մաքսատների ու մաքսային կետերի ստեղծումն է և դրանց աշխատանքը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելը: Նպատակի իրագործման համար, հաշվի առնելով ծանրաբեռնվածությունը և թողունակությունը, անհրաժեշտ է.

1. Բոլոր մաքսային կետերում և մաքսային պահեստներում ստեղծել բեռնարկղային հրապարակներ և տեղադրել տրանսպորտային միջոցները զննող սկաներներ, ռենտգեն, ռադիոակտիվ կամ օզոնային շերտը քայքայող նյութեր հայտնաբերող սարքավորումներ, էլեկտրոնային կշեռքներ, սարքավորումները գործարկելու համար վերապատրաստել համապատասխան մասնագետներ:

2. Մաքսային համակարգում ներդնել տրանսպորտային միջոցների հսկողության այնպիսի համակարգ, որը ղեկավարվի մեկ կենտրոնի կողմից և հսկողություն իրականացնի ՀՀ մուտք գործող կամ տարանցիկ մաքսային ռեժիմով տեղաշարժվող տրանսպորտային միջոցների նկատմամբ:

3. Վերադաս մաքսային մարմնում ներդնել տարածքային մարմինների աշխատանքները տեսանելի դարձնող այնպիսի էլեկտրոնային համակարգ, որի միջոցով հսկողություն կսահմանվի մաքսային ձևակերպումների և ապրանքների զննման գործընթացների նկատմամբ:

4. Ռիսկային ապրանքների դասակարգման և փորձաքննության նպատակով մաքսային լաբորատորիաների ստեղծում:

5. Մաքսային զննման և պահպանման տարածքների ստեղծում, որտեղ կիրականացվեն մանրակրկիտ զննման, ապրանքների նույնականացման և պատասխանատու պահպանության գործընթացները:

6. Տեխնիկական վերազինման պահանջների առումով մաքսային ծառայության կարճաժամկետ և երկարաժամկետ կարիքների զնահատում, վերազինման ուղղությամբ ներդրումային քաղաքականության վերանայում:

Ակնկալվող արդյունք. Միջազգային չափանիշներին համապատասխան մաքսային ձևակերպումների վայրերի և հսկողության գոտիների ստեղծում:

N	Միջոցառման անվանումը	Կատարման Ժամկետը
46.	Վերադաս մաքսային մարմնում ներդնել տարածքային մարմինների աշխատանքները տեսանելի դարձնող էլեկտրոնային համակարգ	2009թ. II եռամսյակ
47.	Մաքսանենգության դեմ պայքարի ստորաբաժանումների վերազինում այդ բնագավառի արդիական սարքերով և սարքավորումներով	2009թ. II եռամսյակ և շարունակական
48.	Մաքսային զննման և ապրանքների պահպանման տարածքների ստեղծում	2009թ. IV եռամսյակ
49.	Ստեղծել բեռնարկղային հրապարակներ բոլոր սահմանային մաքսային կետերում և մաքսային պահեստներում	2010թ. I եռամսյակ
50.	Մաքսային կետերում և մաքսային պահեստներում տեղադրել տրանսպորտային միջոցները զննող սկաներներ, ռենտգեն, ռադիոակտիվ կամ օզոնային շերտը քայքայող նյութեր հայտնաբերող սարքավորումներ, էլեկտրոնային կշեռքներ	2010թ. I եռամսյակ
51.	<i>(51-րդ կետն ուժը կորցրել է 17.02.11թ. N129-Ն)</i>	
52.	Մաքսային համակարգում ներդնել տրանսպորտային միջոցների ղեկավարման հսկողության համակարգ, որով հսկողություն կսահմանվի հանրապետության տարածքով տեղաշարժվող տրանսպորտային միջոցների նկատմամբ	2012թ. I եռամսյակ

ԱՍՓՈՓՈՒՄ

Այս փաստաթղթի նպատակն է նախանշել այն բոլոր աշխատանքները, որ պետք է իրականացվեն առաջիկա 4 տարիների ընթացքում մաքսային վարչարարությունը բարելավելու նպատակով: Փաստաթուղթը կազմվել է հետևյալ կերպ. նախ ներկայացվել են այն 7 հիմնական սկզբունքները, որոնց անհրաժեշտ է հետևել մաքսային վարչարարությունը կատարելագործելու համար, այնուհետև ներկայացված են այն քաղաքականությունները, որոնց իրականացման միջոցով հնարավոր կլինի հասնել սահմանված նպատակներին և դրանից հետո միայն ներկայացված են կոնկրետ միջոցառումներ, որոնք բխում են այդ քաղաքականություններից: Ընդհանուր առմամբ ստացվել է 52 միջոցառում, որոնք պետք է իրականացվեն մինչև 2012 թվականի ավարտը:

Աղյուսակի 25, 27, 37, 43, 44, 46, 47, 48, 49, 50, 51, 52 կետերով նշված գործողությունները հնարավոր կլինի իրականացնել ֆինանսական, այդ թվում այլընտրանքային աղբյուրների ներգրավման արդյունքում:

Փաստաթուղթը քննարկվել է մաքսային ծառայության, ինչպես նաև հանրության, հատկապես գործարար միջավայրի շրջանակներում: Փաստաթղթի հիմնական դրույթները ներկայացվել են լրատվամիջոցներով և բազմիցս քննարկման առարկա են դարձել հեռուստահաղորդումների ընթացքում: Փաստաթուղթը թարգմանված է նաև անգլերեն: Ընդ որում և հայերեն, և անգլերեն տարբերակները տեղադրված են մաքսային ծառայության ինտերնետային կայքում: Փաստաթղթի անգլերեն տարբերակը ներկայացվել է միջազգային կազմակերպություններին, մասնավորապես Համաշխարհային բանկին, Արժույթի միջազգային հիմնադրամին և Եվրոպական հանձնաժողովի՝ հարկային և մաքսային հարցերով պատասխանատու ստորաբաժանմանը: Փաստաթուղթը լայնորեն քննարկվել է Համաշխարհային բանկի՝ ՀՀ կատարած առաքելության ժամանակ:

Փաստաթղթով նախատեսված են մի շարք բազմակողմանի փոփոխություններ: Դրանք վերաբերում են օրենսդրական դաշտին, մաքսային ընթացակարգերին, կադրային քաղաքականությանը, աշխատանքների կազմակերպմանը՝ ընդհուպ մինչև տեխնոլոգիական բնույթի փոփոխությունները ու նոր տեխնիկական լուծումները:

Ենթադրվում է, որ փաստաթղթում ներկայացված միջոցառումների կատարման ընթացքը պետք է մշտապես ուշադրության ներքո լինի՝ ենթարկվելով մոնիտորինգի ըստ համապատասխան միջոցառումների ժամանակացույցի: